# Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

41ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 28 (2028) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 24, 2021
VOLUME 41, NO. 28 (2028) SATURDAY JULY 24, 2021

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Եւրոպական Աննախընթաց Օժանդակութեան Կարեւոր Պատգամները

Հայաստանի խորհրդարանական ընտրութիւնները պաշտօնապէս աւարտեցան երբ Սահմանադրական Դատարանը մերժեց ընդդիմադրութեան դիմումները՝ ընտրութիւնները անվաւեր հռչակելու կապակցութեամբ: Օգոստոսի առաջին օրերուն նորընտիր Ազգային Ժողովը կը գումարէ իր առաջին նիստը ու Հանրապետութեան Նախագահի որոշումով յաղթող՝ Քաղաքացիական Պայմանագիր կուսակցութեան վարչապետի թեկնածուն՝ Նիկոլ Փաշինեան կը հրաւիրուի կազմելու նոր կառավարութիւն:

Հայ-ատրպէյճանական սահմանին վրայ կը շարունակէ տիրել լարուած իրավիճակ: Իլհամ Ալիեւ ոչ միայն Հայաստանի հողային ամբողջականութեան նկատմամբ սպառնալիքներ կը հնչեցնէ, այլ եւ «ցած մակարդակի» ռազմական մնայուն գործողութիւններու միջոցաւ կը փորձէ Երեւանին պարտադրել, որպէսզի ան ընդունի դէպի Նախիջեւան միջանցք տրամադրելու պահանջը:

Ներքին ու արտաքին այս գործընթացներուն զուգահեռ նկատելիօրէն աւելցած է եւրոպական երկիրներու հետաքրքրութիւնը Հայաստանի նկատմամբ: Եւրոպական Խորհուրդի նախագահ Շառլ Միշէլ այցելելով Երեւան վերահաստատեց Եւրոպական Միութեան կողմէ 2.6 միլիառ Եւրոյի տնտեսական օժանդակութիւն տրամադրելու եւ այդ միջոցաւ բազմաթիւ ծրագիրներ իրականացնելու իրենց որոշման մասին: Հայաստանի համար նման մեծ գումարի յատկացում աննախընթաց է եւ կու գայ պատգամ ուղղելու ներքին ու արտաքին ուժերուն, որ 44-օրեայ պատերազմէն ետք Եւրոպան ու նաեւ որոշ չափով Միացեալ Նահանգները պատրաստ չեն Հայաստանը առանձինը ձգելու այս ճակատագրական հանգրուանին:

Միւս կողմէ, Իլհամ Ալիեւի բոլոր պնդումները, թէ Լեռնային Ղարաբաղի հարցը լուծուած է, արդէն իսկ փուլ կու գան: Մինսկի Խումբի անդամ երկիրներու՝ Ռուսաստանի, Միացեալ Նահանգներու եւ Ֆրանսայի Պաքուի մէջ հաւատարմագրուած դեսպանները մերժելով այցելել Շուշի, յստակ դարձուցին, որ Արցախի կարգավիճակի հարցը կը մնայ չլուծուած, որքան որ ալ Ալիեւ հակառակը պնդէ:

Շար.ը էջ 6

## Շառլ Միշէլ Հաստատեց՝ 2,6 Միլիառ Եւրոյի Ֆինանսական Փաթեթ Պիտի Տրամադրուի Հայաստանին

*Եւրոպական Խորհուրդի նախագահ Շառլ Միշէլ երկօրեայ այցով ժամանած էր Հայաստան՝ իր հարաւկովկասեան այցը սկսելով Երեւանէն: Յուլիս 17-ի առաւօտեան նախատեսուածէն աւելի երկար բանակցութիւններ տեղի ունեցան Հայաստանի վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանի հետ, որուն յաջորդեց համատեղ մամլոյ ասուլիս:*

*Փաշինեան-Միշէլ ասուլիսը երկու հիմնական թեմայի շուրջ էր՝ Եւրամիութեան աննախադէպ աջակցութիւնը Հայաստանին եւ հայ-ատրպէյճանական հակամարտութիւնը:*

*Հայաստանի կառավարութեան ղեկավարը յայտարարեց, որ ուժի կիրառումը չի կրնար լուծել ղարաբաղեան հակամարտութիւնը, որու կարգաւորումը հնարաւոր է միայն բանակցութիւններու միջոցով եւ միջազգային մանտաթ ունեցող միակ ձեւաչափի՝ ԵԱՀԿ Մինսկի Խումբի համանախագահութեան շրջանակէն ներս:*

*«Հայաստանը պատրաստ է բանակցութիւններու վերսկսմանը, սակայն Ատրպէյճանը որեւէ արձագանք չի տուել, եւ ոչ պաշտօնական աղբիւրներից ստացած տեղեկութիւնների համաձայն՝ Ատրպէյճանը մտադիր է նոր ռազմական բախումներ հրահրել Արցախում եւ հայ-ատրպէյճանական սահմանին, ինչի արտայայտութիւնը մենք այսօր տեսնում ենք հայ-ատրպէյճանական սահմանի Նախիջեւանի հատուածում: Ատրպէյճանի հրահրած*



Շառլ Միշէլ եւ Նիկոլ Փաշինեան միատեղ մամլոյ ասուլիսի ընթացքին

Շար.ը էջ 5

## Ընկ. Համբիկ Սարաֆեան. «Առաջնորդուիլ Պետական Շահերով Միայն»

*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկ. Համբիկ Սարաֆեան համաձայն չէ, թէ 44-օրեայ պատերազմէն ետք կապը խզուած է հայրենիքի եւ Սփիւռքի միջեւ: «Ընդհակառակը, այսօր պէտք է աւելի օժանդակենք հայրենիքին, որ կը գտնուի շրջադարձային ժամանակահատուածի մէջ:*

*«Առաջին լրատուականին» տրուած ուղիղ հարցազրոյցի մը մէջ Ընկ. Սարաֆեան Սփիւռքի առաջնահերթ հարց համարեց Հայաստանի անվտանգութեան եւ Արցախի կարգավիճակի ապահովումը: Ան պատմական սխալ համարեց մնայուն այն տպաւորութիւնը, թէ Ռուսիան երբեք չի հեռանար տարածաշրջանէն:*

*«Բոլոր երկիրները կ՛ունենան այլընտրանքային ծրագիրներ: Մենք սակայն մէկ ծրագիր ունէինք եւ համոզուած էինք, որ ռուսերը մեզի անպայման պիտի օգնեն, նոյնիսկ եթէ այդ չի բխիր իրենց տարածաշրջանային շահերէն», ըսաւ ընկ. Սարաֆեան:*

*Ան անհասկնալի համարեց հայկական ինքնիշխանութենէն հրաժարելու մասին ոմանց կոչերը, զանոնք որակելով ոչ թէ ազգային դիրքորոշում, այլ Մոսկուային հաճոյանալու փորձեր:*

*Ընկ. Սարաֆեան նշեց, որ երբ Ատրպէյճան անցնող 10 տարիներուն սպառազինութեան մրցավազքի մէջ էր, մեր պետական այրերը կը համոզէին ժողովուրդին, որ*



ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկ. Համբիկ Սարաֆեան

*մենք համաչափ զէնք կը ստանանք Ռուսիայէն, սակայն պարզուեցաւ որ այդպէս չէ: «Անկախութիւնը կարելի չէ սակարկել, այլ պէտք է մենք ըլլանք մեր երկրին տէրը, մեր որոշումները բխին մեր պետական, ոչ թէ ուրիշներու շահերէն», ըսաւ ընկ. Սարաֆեան եւ յիշեցուց, թէ 30 տարի չկրցանք պետական մտածողութիւն եւ մշակոյթ ձեւաւորել Հայաստանի մէջ:*

*«Աւելի առաջնորդուեցանք զգացական նկատառումներով, քան մեր շահերով: Մենք պէտք է սկսինք խօսիլ Թուրքիոյ հետ, գոնէ հասկնալու երկու կողմերուն ակնկալիքները, առանց միջնորդի», եզրափակեց ընկ. Սարաֆեան:*

## Սահմանադրական Դատարանը Մերժեց Ընտրութիւններու Արդիւնքներուն Դէմ Բողոքները

*Հայաստանի Սահմանադրական Դատարանը, Յուլիս 17-ին հրապարակուած որոշումով հաստատեց Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի՝ Յունիսի 27-ի որոշումը՝ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններու արդիւնքներուն վերաբերեալ: Բողոքող կողմերէն «Պատիւ Ունեմ» դաշինքի ներկայացուցիչ Դաւիթ Յարութիւնեան Դատարանի որոշումի հրապարակումէն յետոյ լրագրողներուն ըսաւ, թէ այդ անակնկալ չէր իրենց համար, քանի որ ակնյայտ էր, թէ ինչպէս տեղի կ՛ունենար գործընթացը: Հարցին՝ թէ արդեօք որոշումը քաղաքական էր, Յարութիւնեան պատասխանեց. «Որոշումը քաղաքական չէ, իրաւական է, սակայն քաղաքական ազդեցութեան տակ ընդունուած»:*

*«Հայաստան» դաշինքի ներկայացուցիչ Արամ Վարդեւանեանի համար եւս որոշումը կանխատեսելի էր: Ըստ անոր Սահմանադրական Դատարանի նկատմամբ քաղաքական ճնշումները պարզ են ու յստակ:*

*Բողոքող կողմերը Դատարանէն ներս չկարողացան ներկայացնել յստակ խախտումներու մասին որեւէ փաստարկներ ու բաւարարուեցան խօսելով կողմնակի հարցերու մասին:*

*Արտահերթ խորհրդարանական ընտրութիւնները միջազգային դիտորդներուն կողմէ գնահատուեցան ազատ եւ արդար:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Էլ Ինչու՞մ Են Միասնական Երեք Համանախագահները, Շուշի Այցից Բացի. Սրացում Ալիեւի Մօտ

ՀԱՅԿ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

*Հայաստանում Ֆրանսայի դեսպանը յայտարարել է, որ Արցախի հակամարտութիւնը չի կարող համարուել կարգաւորուած, եթէ յստակ չէ կարգավիճակը: Նախօրէին հակամարտութիւնը կարգաւորուած լինելու վերաբերեալ իր յայտնի պնդումն արել է Ատրպէյճանի նախագահ Ալիեւը, հերթական անգամ խօսելով նաեւ Զանգեզուրի հանդէպ պատմական հաւակնութեան մասին, ասելով, թէ իրենք անպայման վերադառնալու են այնտեղ:*

*Յատկանշական է, որ Ալիեւն այդ մասին խօսում է դեսպանների Շուշի այց կազմակերպելուց յետոյ, երբ ստացել է Մինսկի խմբի բոլոր համանախագահների մերժումը: Ալիեւը դրանից յետոյ ոչ միայն խօսում է Զանգեզուրի մասին, այլ նաեւ սադրանք հրահրում Նախիջեւանում: Դա նշանակում է, որ Շուշիի այցելութեան հրաւէրի մերժումը նա գնահատել է բաւականին լուրջ քաղաքական ակտ:*

*Միեւնոյն ժամանակ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների Պաքւում հաւատարմագրուած դեսպանների Շուշի այցելութեան ալիեւեան հրաւէրը մերժելու հանգամանքը անշուշտ կարեւոր է, սակայն խոշոր հաշուով այդ հանգամանքը ընդամէնը ածանցեալ է առաւել էական մի հարցի՝ Մինսկի խմբի համանախագահութեան ձեւաչափի ապագայի, ընդ որում ոչ թէ ֆորմալ, այլ կենսունակ եւ գործունակ ապագայի: Ահա այդ համատեքստում է նաեւ, որ յատկանշական է մերժումից յետոյ Ալիեւի սուր արձագանքը իր քաղաքական եւ անգամ ռազմական դրսեւորումներով:*

*Միւս կողմից, լայն իմաստով առկայ է համանախագահութեան ձեւաչափի հետ կապուած հարց՝ կա՞յ ապագայ ձեւաչափի համար, թէ՞ ոչ, եւ, եթէ կայ, ապա ինչպիսի՞ն է այդ ապագան: Եթէ այդ հարցը չունի պատասխան, Շուշի այցի հրաւէրի մերժումը անշուշտ շոյում է մեր ականջը եւ ինչ որ իմաստով նաեւ արժանապատւութիւնը, սակայն պատասխան չէ մեզ յուզող անվտանգային, քաղաքական, ռազմա-քաղաքական խորքային հարցերի:*

*Վերջին հաշուով, այդ հարցերից առանցքայինն օրինակ այն է, թէ համանախագահ երկրները միասնական լինելով Շուշի այցի ալիեւեան հրաւէրը մերժելու հարցում, է՞լ ինչում են միասնական: Է՞լ ինչ միասնական մօտեցումներ, դիրքորոշումներ ունեն նրանք, կապուած արցախեան հարցի կամ հայ-ատրպէյճանական հակամարտութեան հետ: Օրինակ, նրանք ունե՞ն միասնական դիրքորոշում միջանցքային այն պնդումների հանդէպ, որոնցով խօսում են Ալիեւն ու Էրտողանը: Նրանք ունե՞ն որեւէ ընդհանուր դիրքորոշում, կամ դիրքորոշումներում ընդհանուր յայտարար, կապուած այդ Զանգեզուրի միջանցք պնդման հետ: Բանն այն է, որ նրանք չեն միանում Թուրք-ատրպէյճանական երգչախմբին, եւ դա փաստ է, դրական, կարեւոր, ողջունելի փաստ:*

*Սակայն, գոնէ առայժմ փաստ է նաեւ, որ համանախագահ երկրներից որեւէ մէկը չի էլ խօսում այն մասին, որ չի կարող խօսք կամ քննարկում լինեն որեւէ Զանգեզուրի միջանցքի վերաբերեալ: Սա բաւականին նման է նախապատերազմական շրջանում համանախագահների վարքագծին, այն իմաստով, որ նրանք իհարկէ որեւէ կերպ չէին միանում Ատրպէյճանի ռազմատենչ յայտարարութիւններին, եւ անգամ յայտարարում էին, որ Արցախի հարցը չունի ռազմական լուծում: Բայց, նրանք նաեւ որեւէ միարժէք կերպով չէին դատապարտում Ատրպէյճանի ագրեսիւ եւ ռազմատենչ հռետորաբանութիւնը, նրանք Պաքուին որեւէ ուղի կերպով կոչ չէին անում չմտածել ագրեսիայի եւ պատերազմի մասին:*

*Ի վերջոյ, տեղի ունեցաւ այն, ինչ տեղի ունեցաւ, եւ այժմ կայ այն վիճակը, որում Պաքուն ու նրա գլխաւոր ռազմա-քաղաքական հովանաւոր Անքարան խօսում են արդէն Զանգեզուրի միջանցքի մասին: Ու, թէ համանախագահ երեք երկրներից որեւէ մէկն այդ մասին չի խօսում Պաքուին ու Անքարային*

Շար.ը էջ 5

# Հայաստանի Առաջարկը Աշխարհին

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

*Յետպատերազմեան ժամանակահատուածում թէ Հայաստանը, թէ Արցախը ունեն լուծելու բարդագոյն ներքին ու արտաքին հարցեր, խնդիրներ, ունեն դիմագրաւելու մարտահրաւէրներ, որոնք պահանջում են օպերատիւ ինտենսիւ աշխատանք եւ գործնականում ժամանակ կամ ռեսուրս չեն թողնում, կամ քիչ են թողնում երկարաժամկէտ ու ռազմավարական աշխատանքի համար: Սակայն նոյնքան անկասկած եւ թերեւս աներկբայ է, որ օպերատիւ աշխատանքի արդիւնաւէտութիւնը զգալիօրէն կախուած է այն հանգամանքից, թէ այդ աշխատանքը, այն իրականացնող կառոյցները եւ անձինք որքանով են գործում բաւականին յստակօրէն մշակուած եւ ձեւաւորուած ընդհանուր երկարաժամկէտ ռազմավարութեան շրջանակում, ինչ ռազմավարական ուղենիշների շրջանակում են օպերատիւ սպասարկման ենթարկւում տարբեր խնդիրները՝ անվտանգայինից մինչեւ տնտեսական:*

*Եթէ դրանք առաւելագոյնս արագ եւ դինամիկ կերպով չբերուեն այդ երկարաժամկէտ ռազմավարական հայեցակարգերի դաշտ, օպերատիւութիւնը ժամանակի ընթացքում դառնալու է աւելի ու աւելի անբաւարար, քանի որ աշխարհաքաղաքական միջավայրը լայն իմաաստով բազմապատկում է մարտահրաւէրների գեներացման արագութիւնը:*

*Ահա այդ իմաստով աւելի ու աւելի կենսական է դառնում Հայաստանում, Արցախում եւ Սփիւռքում առաւելագոյնս խիտ, սերտ գաղափարական դաշտի, ռազմավարական հեռանկարի մշակումը, գաղափարական դաշտում երկարաժամկէտ պլանաւորման աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացումը, որը պէտք է լինի այն մեծ պահարանը, որի արդէն առանձին դարակներով պէտք է դասաւորուեն մնացեալ աւելի կարճաժամկէտ եւ օպերատիւ խնդիրներն ու անելիքները: Աւելին, այդ ընդհանրական գաղափարական ռազմավարական դաշտի, նպատակի եւ ուղենիշների ձեւաւորումը նաեւ պէտք է բարձրացնի պատերազմի լրջագոյն հարուածի թիրախ դարձած հայկական սուբիեկտութիւնը, ընդ որում թէ քաղաքական, տնտեսական, ռազմա-քաղաքական, եւ թէ առաջին հերթին սոցիալ-հոգեբանական իմաստով:*

*Հայաստանի ռազմավարական, գաղափարական եւ արժեհամակարգային առարկայական բովանդակութիւն պարունակող ռեգիոնալ եւ միջազգային դերի շուրջ հասարակական-քաղաքական աշխատանքը եւ կայուն մրցակցութիւնը պէտք է նախ վերականգնի մեզ որպէս հասարակութիւնը, որ պարտութեան եւ իր զաւակների ու տարածքների ծանր կորստից յետոյ, այդպիսի կորուստներ այլեւս չունենալու եւ նաեւ կորցրածը վերականգնելու ներքին, խորքային համոզումով հանդերձ, իր կենսակերպով վերգտնում է ստեղծարար տրամաբանութիւնն ու աշխարհի հետ ոչ թէ սպառողի, այլ մասնակցի եւ առաջարկողի հոգեբանութեամբ յարաբերուելու կարողութիւնը: Այս խնդիրների ուղղութեամբ աշխատանքը պէտք է լինի իհարկէ կառավարող քաղաքական ուժի պատասխանատւութեան դաշտում, բայց նաեւ այդ դաշտ ամենատարբեր հանրային ու քաղաքական խմբեր ներգրաւելու կարողութեան տեսքով, ու միջոցով: Միաժամանակ, այդ աշխատանքը պէտք է լինի նաեւ այն հասարակական-քաղաքական խմբերի առանցքային, ուղենշային անելիքներից մէկը, որոնք չունեն ընթացիկ լուծումների առումով օպերատիւ գործողութիւնների մասնակցութեան անհրաժեշտութիւն:*

*«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

# Չլրջանալու Հետեւանքները 44-Օրեայ Պատերազմից Գրեթէ 9 Ամիս Է Անցել, Բայց Հայաստանում Առ Այսօր Դաւաճաններ Են Փնտռում

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

*Ընդդիմութիւնը Նիկոլ Փաշինեանին է մեղադրում նախօրօք պայմանաւորուած պատերազմով Արցախը յանձնելու եւ այդ գլխացաւանքից ազատուելու մէջ, նա էլ իր հերթին նախկին իշխանութիւններին ու նրանց հետ կապուած հրամանատարներին է մեղադրում միտումնաւոր պարտութեան համար, որի արդիւնքում ժողովուրդը պիտի քշէր այդ ապիկար իշխանութիւններին, ու իրենք պիտի վերադառնային իշխանութեան: Իսկ ահա օբիեկտիւ իրողութիւնները վերլուծելն ու ամբողջական պատկերը տեսնելը մոդայիկ չէ: Որպէս ներքաղաքական պայքարի գործիք՝ դաւաճանութեան թեման շատ աւելի արդիւնական է: Առաւել եւս, որ մինչեւ հիմա այդպէս էլ անյայտ է մնում, օրինակ, թէ ով էր, ի վերջոյ, Շուշիի պաշտպանութեան պատասխանատուն, ինչպէս ատրպէյճանցիները շատ հանգիստ անտառային կածաններով հասան այնտեղ, ինչպէս պատահեց, որ պաշտպանութեան նախարարը պատերազմից յետոյ հանգիստ տեղափոխուեց ԱՄՆ ու հսկայական աշխատավարձով աշխատանքի տեղաւորուեց, եւ այլն: Սրանք ինտրիգային դետալներ են, որոնց բազմազանութիւնը թոյլ չի տալիս հասկանալ ամբողջական պատկերը:*

*Մինչդեռ մեծ հաշուով՝ այդ պատկերն այնքան էլ բարդ չէ: Եթէ շատ կարճ՝ արցախեան առաջին պատերազմում մենք կարողացանք օգտուել Ատրպէյճանում տիրող քաոսային կառավարումից, Ռուսաստանն էլ շատ յստակ ուղերձ յղեց Թուրքիային, որ անմիջական ռազմական միջամտութիւն թոյլ չի տայ, եւ մենք յաղթեցինք: 26 տարի անց Ատրպէյճանը, որ հետեւողականօրէն հզօրացրել էր իր բանակը, օգտուեց Հայաստանում տիրող քաոսային կառավարումից, Ռուսաստանը ոչ միայն չբացառեց Թուրքիայի անմիջական միջամտութիւնը, այլեւ, պարզուեց, համատեղ գործողութիւն էր իրականացնում, եւ արդիւնքում՝ այս անգամ պարտուողը մենք էինք: Ամբողջ խնդիրն այն է սակայն, որ արցախեան*

Շար.ը էջ 6

**ԼՈՒՐԵՐ**

## ՔՊ-ի Ազգային Ժողովի Նախագահի Թեկնածուն Ալեն Սիմոնեանն Է

*«Քաղաքացիական պայմանագրի» խորհրդարանի խօսնակի թեկնածուն Ալեն Սիմոնեանն է, տեղեկութիւնը «Ազատութիւն»ին հաղորդեց իշխող կուսակցութեան անդամ, պատգամաւոր՝ Հրաչեայ Յակոբեան:*

*Ընտրութիւններու արդիւնքներով մեծամասնութիւն ստացած ուժը նաեւ Ազգային ժողովի երկու փոխնախագահներու թեկնածուները որոշած է, անոնք կ՛առաջադրեն այս խորհրդարանէն ներս Արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովը ղեկավարած՝ Ռուբէն Ռուբինեանը ու լրագրողի հետ տեղի ունեցած միջադէպէն յետոյ հրաժարական տուած բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան նախկին նախարար՝ Յակոբ Արշակեանը:*



Ազգային Ժողովի նախագահի թեկնածու՝ Ալան Սիմոնեան

*Ի տարբերութիւն ԱԺ-ի փոխնախագահ՝ Ալեն Սիմոնեանի, խորհրդարանի գործող ղեկավար՝ Արարատ Միրզոյեան ընտրարշաւի ընթացքին բաւական կրաւորական էր: Դեռ անյայտ է, որ պետական կառավարման համակարգին մէջ ան ի՞նչ պաշտօն կը ստանայ կամ արդեօք կը ստանայ ընդհանրապէս:*

*«Զգիտեմ ինքնառաջադրուել էր, թէ որեւէ մէկն առաջադրել է, բայց քննարկումների արդիւնքում կուսակցութիւնը ունեցաւ որոշում, որ պէտք է Ալեն Սիմոնեանը լինի Ազգային ժողովի նախագահի մեր թեկնածուն», - ըսաւ Յակոբեան:*

*Խորհրդարանի խօսնակի ու 3 փոխխօսնակներու ընտրութիւնը ԱԺ-ի առաջին նստաշրջանի օրակարգային հարցերէն պիտի ըլլայ: Բոլոր խմբակցութիւնները թեկնածուներ առաջադրելու իրաւունք ունին, բայց Ազգային ժողովի նախագահն ու փոխնախագահները մեծամասնութեամբ պէտք է ընտրուին, իսկ ապագայ խորհրդարանէն ներս նոյնիսկ ընդդիմադիր 2 խմբակցութիւնները միասին 54 ձայն չունին, ընտրութեան համար այդքան ձայն հարկաւոր է :*

*Առաջին նստաշրջանը պէտք է գումարուի ԱԺ-ի կանոնակարգ օրէնքով՝ խորհրդարանի կազմաւորումէն ետք՝ երկրորդ երկուշաբթի օրը: ԿԸՅ-ի քարտուղար՝ Արմէն Սմբատեան առանց յստակ օր նշելու տեղեկացուց, որ Ազգային ժողովը այս շաբաթ կը կազմաւորուի, այսինքն՝ նոր պատգամաւորներու անունները յայտնի կը դառնան այս շաբաթ, ուրեմն առաջին նստաշրջանը Օգոստոս 2-ին պիտի գումարուի:*

## «Հայաստան» Դաշինքը Վերցուց Մանտաթները

*«Հայաստան» դաշինքը կը վերցնէ մանտաթները, «Ազատութիւն»-ին յայտնեց դաշինքի ներկայացուցիչ, ցուցակի երկրորդ համար՝ Իշխան Սաղաթէլեան:*

*Յուլիս 19-ի երեկոյեան դաշինքի վարչապետի թեկնածու՝ Ռոպերթ Քոչարեան յայտարարեց, որ պատգամաւորական մանտաթը պիտի չվերցնէ: Արդէն կեդրոնական ընտրական յանձնաժողով ներկայացուած է անոր ինքնաբացարկի դիմումը:*

*Քոչարեան իր որոշումը բացատրած է, որ ինք իր բնաւորութեամբ գործադիր իշխանութեան մարդ է՝ չնայած ժամանակին եղած է պատգամաւոր թէ՛ Արցախի եւ թէ՛ Հայաստանի խորհրդարաններու: Ան նաեւ յիշեցուցած է, որ ինք առաջադրուած էր, որպէս «Հայաստան» դաշինքի վարչապետի թեկնածու:*

*Ռոպերթ Քոչարեանէն բացի, «Հայաստան» դաշինքէն ինքնաբացարկի դիմում ներկայացուցած է Մարիաննա Եփրեմեանը:*

*Իշխող «Քաղաքացիական Պայմանագր» կուսակցութենէն ինքնաբացարկի դիմում ներկայացուցած են 16 թեկնածու՝ Նիկոլ Փաշինեանը, Արարատ Միրզոյեանը, Լիլիթ Մակունցը, Սուրէն Պապիկեանը, Արայիկ Յարութիւնեանը, Անահիտ Աւանեսեանը, Ռոմանոս Պետրոսեանը, Յովհաննէս Յարութիւնեանը, Յակոբ Սիմիդեանը, Գնել Սանոսեանը, Համբարձում Մաթեւոսեանը, Տիանա Գասպարեանը, Դաւիթ Գէորգեանը, Նարեկ Մկրտչեանը, Արամ Խաչատրեանը եւ Արմէն Փամբուխչեանը:*

*Նիկոլ Փաշինեանէն բացի, որ «Քաղաքացիական Պայմանագրի» վարչապետի թեկնածուն է, առայժմ յայտնի է միայն, որ «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութիւնը 2,5 տարի ղեկավարած Լիլիթ Մակունցը պիտի նշանակուի Ամերիկայի Միացեալ Նահանգներու մօտ Հայաստանի դեսպան: Կուսակցութենէն դեռ չեն յստակացուցած, թէ ՔՊ ցուցակէն որոնք պիտի երթան գործադիր, սակայն ինքնաբացարկ ներկայացուցած թեկնածուներու մեծ մասը գործադիրի ու մարզերու մէջ գործող, կամ նախկին պաշտօնեաներ են՝ նախարարի պաշտօնակատարներ, մարզպետներ ու քաղաքապետներ:*

*Ինչ կը վերաբերի «Պատիւ Ունեմ» դաշինքին, դաշինքի ներկայացուցիչ՝ Սոս Յակոբեան ըսաւ, որ առայժմ յստակ յայտարարութիւն չեն կրնար ընել Ազգային ժողով երթալ-չերթալու վերաբերեալ:*

## Նորամարգի Ընտրողներուն Կաշառք Տալու Գործով Նախաքննութիւնը Աւարտած Է

*Արարատի մարզի Նորամարգ համայնքի աւելի քան 40 ընտրողներու կաշառք տալու փաստով քննուած քրէական գործի նախաքննութիւնը աւարտած է, յայտնած է Յատուկ քննչական ծառայութիւնը (ՅՔԾ):*

*Համաձայն հաղորդագրութեան՝ պարզուած է, որ Արարատի մարզի Նորամարգ համայնքի՝ «Պատիւ ունեմ» դաշինքի նախընտրական շտապի պետ՝ Վ. Յովհաննիսեանը նոյն համայնքի երեք բնակչուհիներու հետ նախնական համաձայնութեամբ աւելի քան 40 ընտրողներու առաջարկած եւ տուած են կաշառք՝ ԱԺ արտահերթ ընտրութիւններուն յիշեալ դաշինքի օգտին կողմ քուէարկելու համար:*

*Վ. Յովհաննիսեան, համակարգելով «Պատիւ ունեմ»-ի նախընտրական շտապի աշխատանքները, Յունիս ամսուայ սկիզբը շտապի աշխատակցուհի՝ Ն. Մանուկեանի հետ ձեռք բերած է նախնական համաձայնութիւն՝ յիշեալ դաշինքի օգտին կողմ քուէարկելու համար Նորամարգ համայնքի բնակիչներուն մէկ ձայնի դիմաց 15.000 դրամի չափով կաշառք տալու վերաբերեալ: Այնուհետեւ՝ Յունիս 16-ին, Յովհաննիսեանը Մանուկեանին անձամբ տուած է նախ՝ 240.000 դրամ, ապա՝ 300.000 դրամ՝ ընտրողներուն վերոյիշեալ նպատակով տրամադրելու համար:*

*Մանուկեան, իր հերթին, ընտրողներ հաւաքագրելու եւ «Պատիւ ունեմ» դաշինքի օգտին կողմ քուէարկելու համար վերջիններուս կաշառք տալու վերաբերեալ նախնական համաձայնութիւն ձեռք բերած է Նորամարգի բնակչուհիներ Է. Կարապետեանի եւ Ի. Աւետիսեանի հետ:*

*Ձեռք բերուած պայմանաւորուածութեան համաձայն՝ Յունիս 16-18-ի ժամանակամիջոցին՝ Նորամարգ համայնքի վարչական տարածքին մէջ, Յովհաննիսեանը Մանուկեանի հետ, իսկ վերջինս նաեւ Կարապետեանի եւ Աւետիսեանի հետ, նախնական համաձայնութեամբ, «Պատիւ ունեմ 9 կուսակցութիւններու դաշինքի օգտին կողմ քուէարկելու համար ընդհանուր 645.000 դրամ կաշառք բաժնած են Նորամարգ համայնքի աւելի քան 40 ընտրողներու՝ իւրաքանչիւրին 15.000-ական դրամ:*

*Խումբի կազմէն ներս նախնական համաձայնութեամբ երկու եւ աւելի անձերու կաշառք առաջարկելու եւ տալու համար, Յովհաննիսեանին, Մանուկեանին, Կարապետեանին եւ Աւետիսեանին մեղադրանք առաջադրուած է: Յովհաննիսեանի նկատմամբ որպէս խափանման միջոց ընտրուած է կալանաւորումը, միւս մեղադրեալներու նկատմամբ՝ ստորագրութիւն չհեռանալու մասին:*

*Նախաքննութիւնը աւարտած է: Քրէական գործը մեղադրական եզրակացութեամբ ուղարկուած է դատախազին՝ զայն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդութեամբ:*

## Պղինձի Ու Արճիճաքարի Խտանիւթի Արտահանման Պետական Տուրքով Կէս Տարուայ Մէջ 35 Միլիառ Դրամ Կը Մուտքագրուի Պիւտճէ

*Ազգային ժողովը Յուլիս 15-ի արտահերթ նիստին, երկրորդ ընթերցմամբ ընդունեց մետաղներու գործող շուկայական գիներու շուրջ 15 տոկոսի չափով արտահանման տուրք սահմանող կառավարութեան նախագիծը:*

*Տնտեսութեան նախարարի պաշտօնակատար՝ Վահան Քերոբեան յայտարարեց, որ հաշուարկած են, որ այս փոփոխութենէն յետոյ առաջիկայ 6 ամիսներուն, պիւտճէ կը մուտքագրուի մօտ 35 միլիառ դրամ: Իսկ փոփոխութեան պատճառը, ըստ Քերոբեանի, պղինձի ու արճիճաքարի (մոլիպտէն) միջազգային գիներու կտրուկ բարձրացումն է:*

*«Պղնձի գները անցած տարուայ 6 հազար տոլար 1 մեթրիկ թոնի համար այժմ գտնւում են մօտաւորապէս 9200-9300 տոլարի սահմաններում, իսկ մոլիպտէնի գները անցած տարուայ միջին 24 հազարի փոխարէն այժմ 41 հազար տոլարի սահմաններում են: Այսինքն այս աւելացումն ըստ էութեան թոյլ է տալիս, որպէսզի աւելացուած մասի մի մասը մենք վերցնենք», - ըսաւ Քերոբեան:*

*Կառավարութեան ներկայացուցիչը հերքեց, թէ նախաձեռնութիւնը քաղաքական նպատակներ կը հետապնդէ:*

*«Այս նախագիծը չի քննարկուել տնտեսվարողների հետ, որովհետեւ այստեղ այնքան ակնյայտ գործողութիւն ենք մենք անում, որը քննարկելու կարիք չկայ: Բայց այն համակարգային փոփոխութիւնները, որ նախաձեռնում ենք, այդտեղ ներգրաւուած կը լինեն թէ՛ բնապահպաններ, թէ՛ միջազգային մասնագէտներ, թէ՛ ֆինանսական եւ խորհրդատուական ընկերութիւնների ներկայացուցիչներ, թէ՛ հենց յստակ տնտեսվարողները», - նշեց Վահան Քերոբեան:*

*Իշխող «Իմ քայլ»էն պատգամաւոր՝ Յովիկ Աղազարեան հարցուց, եթէ պղինձի գիները կտրուկ իջնեն, ի՞նչ պիտի ըլլայ այդ պարագային. կառավարութենէն գիներու կտրուկ փոփոխութիւն չեն սպասեր, բայց եթէ նոյնիսկ անկում ըլլայ, ըստ նախարարի պաշտօնակատարին՝ գերշահոյթն այնքան է, որ գունաւոր մետաղներու խտանիւթ արտահանողներու տարեկան ցուցանիշներուն վրայ չ՛ազդեր:*

*Պղինձի խտանիւթի խոշոր արտահանողներէն է Զանգեզուրի պղնձամոլիպտենային գործարանը, որու խորհուրդի անդամ է ընդդիմադիր «Հայաստան» դաշինքի ցուցակով պատգամաւորի թեկնածու առաջադրուած, Սիւնիքի նախկին մարզպետ՝ Վահէ Յակոբեանը: Ջնայած իշխանութեան պնդումներուն, թէ պղինձի ու արճիճաքարի (մոլիպտէն) արտահանման տուրքի բարձրացումը պայմանաւորուած է միջազգային գիներու բարձրացմամբ, Ռոպերթ Քոչարեանի առաջնորդած «Հայաստան» դաշինքը անոր մէջ քաղաքական շարժառիթներ կը տեսնէ:*

*Իշխող ուժէն կառավարութեան առաջարկը արդարութեան վերականգնում կը համարեն. Գէորգ Պապոյեան ըսած է, թէ 15 տոկոս արտահանման տուրքը հարկային շատ մեծ բեռ չէ: Պնդած է, որ հանքարդիւնաբերութեան հարկերը Հայաստանի մէջ ամենացածրերէն են. երկրներ կան 40-50 տոկոս հարկ սահմանած են:*

*2020-ի տուեալներով՝ պղինձի խտանիւթը Հայաստանէն ամենաշատ արտահանուած ապրանքն է՝ շուրջ 510 հազար թոն: Հայաստանէն 16 հազար թոնէն աւելի ալ արճիճաքար արտահանուած է : Ընդհանուր աւելի քան 730 միլիոն տոլար արժողութեամբ:*

# ԼՈՒՐԵՐ

## Ըստ Ալիեւի՝ Տարածաշրջանի Բոլոր Հաղորդակցութիւնները Պէտք Է Բացուին Միեւնոյն Ժամանակ



Շառլ Միշել եւ Իլհամ Ալիեւ Պաքուի մէջ կայացած հանդիպումի ընթացքին

*«Կայունութիւնը եւ անվտանգութիւնը տարածաշրջանին մէջ կը դառնան արդէն իրականութիւն», յայտարարած է Ատրպէյճանի նախագահը:*

*Յուլիս 18-ին, Պաքուի մէջ Եւրոպական Միութեան խորհուրդի նախագահ՝ Շառլ Միշելի հետ համատեղ ասուլիսի ժամանակ Իլհամ Ալիեւ շեշտած է, որ «բոլոր հաղորդակցութիւններու բացումը կարեւոր հարց է յետ հակամարտութեան կարգաւորման գործին մէջ, եւ այդ իր արտացոլումը գտած է անցեալ տարուայ Նոյեմբեր [լոյս] 10-ին Ռուսաստանի նախագահի, Հայաստանի վարչապետի եւ իմ կողմէ ստորագրուած եռակողմ յայտարարութեամբ»:*

*«Թրէնտ» լրատուական գործակալութեան հաղորդմամբ՝ Ալիեւ յայտնած է, որ սկսած է Հայաստանի հետ սահմանի ուղղութեամբ երկաթուղագիծերու եւ մայրուղային ճանապարհի շինարարութիւն:*

*«Մենք պէտք է մեր տարածքին մէջ կառուցենք աւելի քան հարիւր քիլոմեթր մայրուղային եւ երկաթուղային ճանապարհներ Հայաստանի ուղղութեամբ: Հայաստանի տարածքին մէջ առկա ընդամէնը շուրջ 40 քիլոմեթր կը կազմէ: Բոլոր տարածաշրջանի հաղորդակցութիւնները պէտք է բացուին զուգահեռաբար: Այդ թոյլ կու տայ Հայաստանին երկաթուղային հաղորդակցութիւն ստանալ Ռուսաստանի եւ Իրանի հետ: Այդ թոյլ կու տայ Ատրպէյճանին լրացուցիչ ելք ստանալ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութիւն, եւ տարածաշրջանի 4 երկիրներ՝ Ատրպէյճանը, Իրանը, Ռուսաստանը եւ Թուրքիան ուժեղ աջակցութիւն կը ցուցաբերեն այդ մօտեցման: Այդպիսով, մենք պէտք է Հայաստանէն ստանանք դրական պատասխան, բայց այդ հարցը պէտք չէ ընտրողական ըլլայ», - ըսած է Ատրպէյճանի նախագահը:*

*«Բոլոր հաղորդակցութիւնները պէտք է բացուին միեւնոյն ժամանակ, եւ այդ տեսանկիւնէն խտրականութիւն պէտք չէ ըլլայ: Անկասկած, անկէ յետոյ կանխատեսելիութիւնը, կայունութիւնը եւ անվտանգութիւնը տարածաշրջանին մէջ արդէն իրականութիւն կը դառնան: Մենք այդ կը ցանկանք», - վստահեցուցած է Ալիեւ:*

## ԱՄՆ Մտահոգութիւն Կը Յայտնէ Սահմանին Տիրող Իրավիճակին Կապակցութեամբ



*Միացեալ Նահանգները մտահոգ է Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմանի երկայնքով արձանագրուող միջադէպերով, յատկապէս՝ Երասխ/Սադարակ հատուածի վերջին դէպքերով:*

*«Մենք երկու կողմին կոչ կ՛ընենք արագ եւ խաղաղ կերպով թուլացնելու լարուածութիւնը եւ առարկայական բանակցութիւններու վերսկսման տիրոյթ ստեղծելու», - ըսուած է Հայաստանի մօտ ԱՄՆ-ի դեսպանութեան յայտարարութեան մէջ:*

*Յուլիս 19-էն կրկին լարուած է իրավիճակը հայ-ատրպէյճանական սահմանի՝ Նախիջեւանի հատուածին մէջ: Պաշտպանութեան նախարարութենէն յայտնած են, որ գիշերը մինչեւ ժամը 2-ը ատրպէյճանական զինուժը շարունակած է հրաձգային զինատեսակներէն, արդէն առանց ականանետերու կիրառման, գնդակոծել հայ-ատրպէյճանական սահմանի Երասխի հատուածը տեղակայուած հայկական դիրքերը:*

*Փոխհրաձգութեան հետեւանքով հրազէնային վիրաւորում ստացած է Երասխի գիւղապետ Ռատիկ Օղիկեան:*

*Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան հաղորդմամբ՝ փոխհրաձգութեան հետեւանքով ատրպէյճանցի զինծառայող վիրաւորուած է: Հայկական ու ատրպէյճանական կողմերը զիրար կը մեղադրեն իրավիճակի լարման համար:*

## Ելլելով Պաքուի Տրամաբանութենէն Հայ Փախստականները Պէտք Է Վերադառնան Ատրպէյճանի Հայաթափուած Տարածքներ



*Ատրպէյճանական կողմը, Հայաստանի հանդէպ առաջադրելով տարածքային եւ պատմական կեղծ պահանջներ, կը փորձէ մէկ կողմէ միջազգային օրակարգէն դուրս հանել ղարաբաղեան հակամարտութիւնը, իսկ միւս կողմէ՝ ստեղծել նոր սպառնալիքներ տարածաշրջանային անվտանգութեան եւ կայունութեան համար, «Արմէնփրէսի» խնդրանքով, արձագանգելով Պաքուէն հնչող յայտարարութիւններուն, յայտնած է Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը:*

*Ատրպէյճանի ԱԳՆ-ի պաշտօնական ներկայացուցիչը, ի պատասխան Հայաստանի վարչապետի պաշտօնակատարի՝ Եւրոպական խորհուրդի նախագահի հետ համատեղ ասուլիսի ժամանակ ըրած յայտարարութիւններուն, պնդած է, թէ պաշտօնական Պաքուն տարածքային պահանջներ չունի հարեւաններու նկատմամբ, իսկ Զանգեզուր, Սեւան, Երեւան ատրպէյճանցիներու «վերադառնալու» մասին խօսելով՝ նկատի ունին 2020 թուականի Նոյեմբեր 9-ի յայտարարութեան կէտը փախստականներու ու բռնի տեղահանուածներու վերադարձի մասին:*

*Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան համոզմամբ, փորձելով հիմնաւորել նմանօրինակ շինծու օրակարգը, ատրպէյճանական կողմը չի խորշեր Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան բացայայտ կեղծիքներ վերագրելէն:*

*«Եթէ ելնենք վերոնշեալ փաստաթղթի՝ տեղահանուածների վերադարձի ատրպէյճանական մեկնաբանութեան տրամաբանութենից, ապա հայ փախստականները պէտք է վերադառնան Նախիջեւան, Գանձակ, Պաքու, Սումկայիթ եւ ներկայիս Ատրպէյճանի այլ հայաթափուած տարածքներ: Ինչ վերաբերում է Ատրպէյճանի ԱԳՆ խօսնակի կողմից հնչեցուած Հայաստանի հանդէպ պատմական պահանջներին, ապա մեզ համար դժուար է ըմբռնել «պատմական» բնորոշման Ատրպէյճանի չափանիշները: Ստիպուած ենք վերստին յիշեցնել, որ պատմութիւնը երբեք չի կարող լինել մի այնպիսի երկրի ուժեղ կողմը, որի թէ՛ աշխարհագրական եւ թէ՛ քաղաքական անուանումը մէկդարեայ պատմութիւն ունի, իսկ ատրպէյճանցի անուանումն անգամ դրանից էլ նոր է», - ըսուած է պարզաբանման մէջ:*

*Ըստ Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան լրատուութեան եւ հանրային դիւանագիտութեան վարչութեան՝ հայ եւ ատրպէյճանցի ժողովուրդներու միջեւ յարատեւ թշնամութիւն սերմանելու եւ պահպանելու Ատրպէյճանի ղեկավարութեան ջանքերը տեւական սպառնալիք են տարածաշրջանային խաղաղութեան եւ անվտանգութեան համար:*

*«Հայաստանին վրէժխնդրութեան մէջ մեղադրելուց առաջ Ատրպէյճանը պէտք է միջազգային հանրութեանը բացատրի, թէ որն է Պաքուի «ռազմավարի պուրակի» խորհուրդը, որը ոչ այլ ինչ է քան վրէժխնդրութեան եւ մարդատեացութեան ամօթալի «յուշարձան», - ըսուած է պարզաբանման մէջ:*

## Վաղարշակ Յարութիւնեան Հրաժարած Է

*Հայաստանի պաշտպանութեան նախարարութենէն հաստատեցին, որ նախարարի պաշտօնակատար Վաղարշակ Յարութիւնեան հրաժարական ներկայացուցած է:*

*Պատճառները եւ այլ մանրամասնութիւններ առայժմ չեն հաղորդուած:*

*Յարութիւնեանը Հայաստանի ռազմական գերատեսչութիւնը կը գլխաւորէր անցեալ տարուայ Նոյեմբեր 20-էն, մինչ այդ վարչապետի խորհրդականն էր:*

## Էրտողանի Որոշումով Թուրքիոյ Մէջ Կը Հիմնադրուի Ցեղասպանութիւններու Ուսումնասիրման Հիմնարկ

*Թուրքիոյ նախագահ՝ Ռէճէպ Թայյէպ Էրտողան ստորագրած է որոշում ցեղասպանութիւններու հետազօտական հիմնարկ ստեղծելու մասին: «Արմէնփրէս»-ի հաղորդմամբ՝ հիմնարկը պիտի գործէ Պոլսոյ համալսարանին կից եւ պիտի կոչուի «Ցեղասպանութեան եւ մարդկութեան դէմ գործուած յանցագործութիւններու միջազգային հիմնարկ»:*

*Էրտողանի կողմէ Յուլիս 14-ին ստորագրուած որոշումը տեղադրուած է պաշտօնական որոշումներու ու կարգադրութիւններու հրապարակման Resmi Gazete կայքը:*

## Իրանի Նորընտիր Նախագահ՝ Իպրահիմ Ռայիսի Ուղերձը Վարչապետ Փաշինեանին



Իրանի Հանրապետութեան Նորընտիր Նախագահ՝ Սէյէտ Իպրահիմ Ռայիսի

*Իրանի Իսլամական Հանրապետութեան նորընտիր նախագահ՝ Սէյէտ Իպրահիմ Ռայիսի ուղերձը Հայաստանի Հանրապետութեան վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեանին*

*«Բարձր կը գնահատեմ ձեր անկեղծ շնորհաւորանքը իմ՝ որպէս Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ ընտրուելու կապակցութեամբ:*

*Իրանի Իսլամական Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ կապերը հիմնուած են երկու ազգերու մշակութային վաղեմի յարաբերութիւններու վրայ, որոնք տեւական եղած են բարեկամական: Միջազգային եւ տարածաշրջանային խնդիրներու հարցով երկու երկիրներու նոյնատիպ եւ մօտ դիրքորոշումները, որոնք ուղեկցուած են կառուցողական համագործակցութեամբ, մեր յարաբերութիւններու կարեւորութեան ցուցիչն են:*

*Ընդհանուր մարտահրաւէրները անխուսափելի դարձուցած են երկու երկիրներու փոխգործակցութեան խորացումը՝ յանուն տարածաշրջանի խաղաղութեան ապահովման եւ կայունութեան պահպանման: Յուսով եմ, որ առաջիկայ ժամանակահատուածին կը կարողանանք համագործութեան սկզբունքով ազդեցիկ քայլեր իրականացնել տարբեր ոլորտներու մէջ համագործակցութեան հիմքերու ամրապնդման ուղղութեամբ:*

*Կը մաղթեմ ձեզ առողջութիւն եւ երջանկութիւն, իսկ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանն ու ժողովուրդին՝ յաջողութիւն եւ բարօրութիւն»,-նշուած է ուղերձով:*

## Պրատ Շերմընն ու Սամանթա Փաուըրը Քննարկած Են Արցախէն Տեղահանուածներուն Օգնութիւն Տրամադրելու Հարցը




Քոնկրէսական՝ Պրատ Շերմըն եւ դեսպան՝ Սամանթա Փաուըր

*ԱՄՆ-ի քոնկրէսական՝ Պրատ Շերմըն ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալութեան (USAID) տնօրէն, դեսպան՝ Սամանթա Փաուըրին հարց ուղղաքոնկրէսական՝ Պրատ Շերմընծ է, ցանկալով տեղեկանալ, արդեօ՞ք Միացեալ Նահանգներու վարչակազմը մտադի՞ր է Ատրպէյճանի պատերազմական յանցագործութիւններու ու յարձակումի հետեւանքով Արցախէն տեղահանուած աւելի քան 100 հազար հայերուն օգնելու նպատակով 5 միլիոն տոլար գումարէն բացի օգնութիւն տրամադրել:*

*«Անդրադառնալով Կովկասեան տարածաշրջանին՝ ԱՄՆ պետական քարտուղար Պլենքըն խոստացած էր համագործակցիլ մեզի հետ՝ աջակցելու 100 հազար հայերուն, որոնք տեղահանուած էին Ատրպէյճանի յարձակումի հետեւանքով: ԱՄՆ-ը 5 միլիոն տոլար կամ անկէ քիչ օգնութիւն տրամադրած է հայերուն: Մտադի՞ր էք աւելի շատ օգնութիւն յատկացնել»,- հարց ուղղած է Պրատ Շերմըն:*

*Սամանթա Փաուըր նշած է, որ կը զբաղին տեղահանուածներու խնդիրով: Դեսպանը իր պատրաստակամութիւնը յայտնած է համագործակցելու այս հարցով, որու համար լրջօրէն մտահոգուած է*

## Էլ Ինչու՞մ Են Միասնական

Շարունակուած էջ 2-էն

*զուգահեռ, բայց կարծես թէ նրանցից որեւէ մէկը այդ հարցում չի էլ խօսում Պաքուին ու Անքարային դէմ: Սա բոլորովին չի նշանակում, որ նրանք աջակցում են Թուրք-ատրպէյճանական օրակարգին, բայց սա նշանակում է, որ նրանք առնուազն դէմ չեն դրա առկայութեանը, որպէս իրենց համար յետագայ օգտագործման ենթակայ գործօն՝ աւելի լայն ռազմավարութեան շրջանակում:*

*Հետեւաբար, Հայաստանի համար կայ խնդիր՝ հակադրել այդ իրողութեանը սեփական գործօնները, որոնք կարող են դիտարկելի դառնալ նաեւ Մինսկի խմբի համանախագահ երկրների ռազմավարութիւններում, հաշուի առնելով իհարկէ այդ ռազմավարութիւններում առկայ շօշափելի իրարամերժութեան հանգամանքը:*

*Այստեղ է, որ Հայաստանի համար սուր անկիւններ հարթելու առաւելագոյնս ճկուն մեխանիզմ կարող է լինել Հայաստան-Սփիւռք տիրոյթը, այդ տիրոյթում առարկայական քննարկումների միջոցով հնարաւորինս լայն գաղափարներ օրակարգ բերելու նպատակադրումով:*

*«ԵՐԵՒԱՆԼՈՒՐ»*
*կայքէջ*

## Վարուժան Ներսէսեան Դեսպան Նշանակուած է Մեծ Բրիտանիոյ Մէջ



Դեսպան Վարուժան Ներսէսեան

*Վարուժան Ներսէսեան ետ կանչուած է Միացեալ Նահանգներու մօտ Հայաստանի դեսպանի պաշտօնէն եւ նշանակուած դեսպան՝ Մեծ Բրիտանիոյ եւ Հիւսիսային Իրլանտայի Միացեալ Թագաւորութեան մօտ՝ երեք տարի ժամկէտով: Համապատասխան հրամանագիրները նախագահ՝ Արմէն Սարգսեան ստորագրած է վարչապետ Նիկոլ Փաշինեանի առաջարկութեամբ:*

*Ներսէսեան ԱՄՆ-ի մօտ Հայաստանի դիւանագիտական առաքելութիւնը կը ղեկավարէր 2018 թուականի Հոկտեմբերէն:*

*Այսօրուայ մէկ այլ հրամանագիրով, որ նոյնպէս հրապարակուած է Հայաստանի նախագահի պաշտօնական կայքէջ, Ջիւնիկ Աղաճանեան ետ կանչուած է Ինտոնեզիոյ, Մալայզիոյ եւ Սինկաբուրի մօտ Հայաստանի դեսպանի պաշտօնէն:*

*Աղաճանեան Ինտոնեզիոյ մօտ Հայաստանի դեսպան նշանակուած էր 2018-ի Մարտին, մինչ այդ շուրջ 7 տարի ղեկավարած էր Հայաստանի դիւանագիտական առաքելութիւնը Հոլանտայի մէջ:*

## Շառլ Միշէլ Հաստատեց

Շարունակուած էջ 1-էն

*միջադէպերը թոյլ չեն տալիս նաեւ սկսել հայ-ատրպէյճանական սահմանի դելիմիտացիային եւ դեմարկացիային ուղղուած աշխատանքները, որոնց նոյնպէս ես մի քանի անգամ հրապարակային անդրադարձել եմ, այդ թւում՝ նախընտրական քարոզարշաւի ընթացքում», - ըսաւ Նիկոլ Փաշինեան:*

*«Ռազմագերիների, պատանդների եւ այլ պահուող անձանց չվերադարձնելու Ատրպէյճանի գործելակերպը նրա կողմից Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան խախտման միակ դէպքը չէ:*

*«Ինչպէս գիտէք, Նոյեմբերի 9-ի յայտարարութեամբ նախատեսուած է տարածաշրջանի բոլոր տրանսպորտային եւ տնտեսական ենթակառուցուածքների ապաշրջափակում: Ատրպէյճանն այս գործընթացին խոչընդոտում է ոչ միայն Հայաստանի սուվերէն տարածքն օկուպացնելու ակնյայտ սպառնալիքներով, այլեւ՝ ի հեճուկս իր պարտաւորութիւնների, հրաժարւում է Հայաստանին միջանցք տրամադրել Հայաստան-Վրաստան, Ատրպէյճան-Ռուսաստան երկաթուղու գործարկման համար», - ասուլիսի ընթացքին յայտարարեց ՀՀ վարչապետի պաշտօնակատարը:*

*Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման մասին երկար խօսեցաւ նաեւ Շառլ Միշէլը՝ յայտնելով, թէ վաղը Պաքուի մէջ Ատրպէյճանի նախագահին հետ հանդիպման ընթացքին կը փորձէ հասկանալ, թէ ինչ դրական դեր կրնայ խաղալ Եւրամիութիւնը՝ սատարելով ԵԱՀԿ Մինսկի Խումբին:*

*Եւրոպական Խորհուրդի նախագահը ուշագրաւ յայտարարութիւն ըրաւ, ըսելով թէ պէտք է հնարաւոր ըլլայ արծարծել կարգավիճակի հարցը: Եւրամիութեան բարձրաստիճան ներկայացուցիչը փաստօրէն, հրապարակեց Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման Պրիւքսէլի առաջարկը՝ բաղկացած չորս կէտերէ. յետայսու չափաւոր հռետորաբանութիւն կիրառել՝ լուծման հասնելով գերիների վերադարձի եւ ականապատման քարտէզներու հարցով: Երկրորդ՝ ձեռնամուխ ըլլալ սահմանազատման՝ վիճարկուող տարածքներէն ետ քաշելով երկու կողմերու զօրամիաւորումները: Երրորդ՝ քննարկումներ սկսիլ տարածաշրջանային ուղիներու վերաբացման շուրջ: Չորրորդ կէտը՝ աւելի ընդհանուր, կարգավիճակի հարցը, խաղաղութեան բանակցութիւնը պէտք է հնարաւոր ըլլայ նաեւ արծարծել:*

*Շառլ Միշէլ շնորհաւորեց Հայաստանի ղեկավարին արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն արձանագրած յաղթանակի առթիւ, որ օրինականութիւն կու տայ Նիկոլ Փաշինեանին Հայաստանի մէջ բարեփոխումներ իրականացնելու համար:*

*«Եւրամիութիւնը կը փափաքի շատ հաւատարիմ, ներգրաւուած, ակտիւ գործընկեր ըլլալ Հայաստանի բարօրութեան, կայունութեան եւ անվտանգութեան համար: Եւ ես մէկ շատ հզօր ուղերձ կը յղում Ձեզի. մենք Ձեր կողքին ենք, եւ մենք կը հաստատենք մէկ անգամ եւս՝ աննախադէպ՝ 2,6 միլիառ Եւրոյի ֆինանսական փաթեթ պիտի տրամադրենք Հայաստանին, որպէսզի աջակցինք երկրի առաջնահերթութիւններու իրականացման», յայտարարեց Եւրոպական Խորհուրդի նախագահ Շառլ Միշէլ:*

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# Ճակատագրական Ամիսներ

ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

*Յառաջիկայ ամիսները ճակատագրական պիտի ըլլան Հայաստանի եւ հայութեան համար: Հայաստանի հանրապետութիւնը պէտք է որոշէ, որ դէպի ո՞ւր պիտի հակի նոր ձեւաւորուող համաշխարհային համակարգին մէջ: Եւ այդ որոշումը իր մեծակշիռ անդրադարձը պիտի ունենայ ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ աշխարհացրիւ հայութեան վրայ: Արեւելեան թէ արեւմտեան արեւելումի խնդիրը քիչ մը աւելի բարդացած է հիւսիսային եւ հարաւային ազդակի ներմուծումով:*

*Նախկին ԱՄՆ-Սովետ Միութիւն հակամարտութիւնը փոխարինման ընթացքի մէջ է ԱՄՆ-Չինաստան հակամարտութեամբ: Այս ընթացքին մէջ մեզի համար կարեւոր է հետեւիլ թէ ինչպէ՞ս պիտի դիրքորոշուին Ռուսիան, Թուրքիան, Իրանը եւ Եւրոպական Միութիւնը: Այս տեսանկիւնէն պէտք է դիտենք նաեւ Արցախեան 44-օրեայ պատերազմը եւ ըստ այնմ յանգինք հետեւութիւններու:*

*Որպէսզի կարենանք ճիշդ եզրակացութիւններու հասնիլ, պէտք է անպայմանօրէն ձերբազատուինք հատուածական նեղ մտածելակերպէ եւ որդեգրենք անաչառ քննական մօտեցում, կարենալ տեսնելու համար մեծ պատկերը: Այս մէկը դժուարին աշխատանք է, մանաւանդ երբ նկատի կ'ունենանք, որ մեր պատմութիւնը ընդհանրապէս խեղաթիւրուած է: Ասոր մեծագոյն օրինակներէն մէկը Վարդանանցի պատմութիւնն է, որ կը ներկայացուի հերոսի ու դաւաճանի նախնական պատկերով, փոխան եկեղեցի-պետութիւն հակամարտութեան, նաեւ նախարարական տուներու միջեւ արեւելումի հակամարտութեան իրողութեամբ: Յատկանշական եւ այսօրուան համար ուսանելի օրինակ մըն է նաեւ Հայաստանի Ա. Հանրապետութեան արեւելումի հարցը, որ թաղուած է կուսակցական պայքարի տիղմին մէջ: Կ'արժէ այս երկրորդին արագօրէն անդրադառնալ, իր այժմէական նշանակութեան համար:*

*Մէկդի դնելով կուսակցական պատմաշինութիւնը, յետադարձ հայեացքով յստակ կը դառնայ, որ այդ ժամանակ, փոխանակ տարուելու Արեւմուտքի անիրագործելի խոստումներով, եթէ աւելի շուտ տեսնէինք Օսմանեան եւ Ցարական կայսրութեանց փլատակներէն յառնող Քեմալական Թուրքիան եւ Պոլշեւիկեան Ռուսիան ու ըստ այնմ կողմնորոշուէինք, ապա չէինք կորսնցներ Վրաստանին եւ Ազրպէյճանին, որոնք մեզմէ աւելի զգաստ շարժեցան եւ մեր հաշւոյն նուաճումներ արձանագրեցին : Այդ ատենուան մեր իշխանութիւնը, յանձինս ՀՅԴ-ի, սխալ կողմնորոշուեցաւ եւ տուժեցինք: Այդ ժամանակ ալ համաշխարհային նոր համակարգ մը ձեւաւորումի մէջ էր եւ Պիզմարքեան «երկաթով ու արիւնով» պետութիւններ կը գոյանային ու իրենց կամքը կը պարտադրէին: Տարացքները մեծ նշանակութիւն ունէին ու հետեւաբար անմիջական զօրաւոր հարեւանի նեցուկը էական անհրաժեշտութիւն մըն էր: Ներկայիս ձեւաւորուող համաշխարհային նոր համակարգի գլխաւոր հիմքերն են տեղեկատուական արուեստագիտութիւնը (information technology) եւ տնտեսագիտութիւնը: Երկուքին ալ պարագային, առաջնորդող ուժը Արեւմուտքն է (ԱՄՆ-ի գլխաւորութեամբ), որմէ ետք կու գայ Չինաստանը, բայց ոչ այնքան Ռուսիան, որ նահանջի մէջ է: Եթէ Բ. Աշխարհամարտի աւարտի հզօր Ռուսիան չկրցաւ իր կամքը պարտադրել Թուրքիոյ վրայ, ապա այդ մէկը մեզի մտածել պէտք է տայ մեր հաշուարկներուն մէջ ըստ այնմ կողմնորոշուելու եւ հակակշիռներ որոնելու Ռուսիոյ ամբողջական գերիշխանութեան չենթարկուելու: Մեր պետական արեւելումի հիմքը մեր ազգային շահերը պէտք է ըլլան:*

*Երբ ակնարկ մը կը նետենք մեր պետութեան անցած 30 տարիներու կեանքին վրայ, դժուար չէ տեսնել, որ Ռուսիան միշտ ալ քայլեր առած է Հայաստանը իր ամբողջական տիրապետութեան տակ առնելու եւ իր շահերուն ծառայեցնելու: Զարմանալի բան չկայ այստեղ, որովհետեւ մեծ պետութիւններու խաղն է այդ: Դժբախտութիւնը հոն է, որ մեր մէջէն կը գտնուին մարդիկ, որոնք իրենց անձնական շահերէն մեկնած, հլու հնազանդ գործիքը կը դառնան օտարին: Անմիջապէս ի մտի կու գան «գոյք պատքի դիմաց» քօղին տակ Հայաստանի ինքնիշխանութեան եւ ռազմավարական արժէք ներկայացնող հաստատութեանց կլանումը, հաղորդակցական կապերէն մինչեւ աթոմակայան, Հոկտեմբեր 27-ով մեր պետականութեան գլխատումը, Իրան-Հայաստան կազատար խողովակի տրամագիծի կիսով նուազեցումը, Հայաստան-Եւրոպական Միութիւն ընկերակցական համաձայնագրի տապալումը, ՀԱՊԿ-ի անարդիւնաւէտութիւնը եւ անոր անդամներու սերտակցութիւնը ոչ-անդամ Ազրպէյճանի հետ, ի վնաս անդամ Հայաստանի, եւայլն:*

Յունիսի 13-ին գլխաւոր հիւպատոսն այցելել էր Եուտա նահանգի Օգդէն քաղաքում գտնուող Ուեբերի պետական համալսարան: Դեսպան Բայբուրդեանը հանդիպումներ էր ունեցել Ուեբերի պետական համալսարանի նախագահ Բրեդ Մորթենսենի, պրովոստ եւ գիտական աշխատանքների գծով փոխնախագահ Ռավի Կրովիի, դեկան եւ միջազգային կապերի պատասխանատու Ցիմին Ուոնգի, Առողջապահական մասնագիտութիւնների քոլեջի դեկան Ցասմին Սիմոնեանի եւ խաղաղութեան եւ զարգացման ամպիոնի նախաձեռնող խմբի հետ: Քննարկուել եւ համաձայնեցուել էին Հայաստանի բուհերի հետ գործընկերութեան հաստատման օրակարգային մի քանի կարեւոր կէտեր, մասնաւորապէս՝ Ուեբերի պետական համալսարանի ուսանողների համար Հայաստանում ուսումնառութեան ծրագրի մեկնարկի, Լոս Անճելոսում գործընկերութեան խթանման միջոցառում կազմակերպելու եւ այլնի վերաբերեալ: Դեկան Սիմոնեանի հետ եւ Դումկէի առողջապահական մասնագիտութիւնների քոլեճի ամպիոնի վարիչների հետ հանդիպմանը քննարկումը սեւեռուել էր Երեւանի պետական բժշկական համալսարանի հետ գործընկերութիւն հաստատելու խնդրի վրայ:

Ամերիկայի հայկական համագումարի Եուտայի նախագահ Նարինէ Սարգսեանը ընթրիք էր կազմակերպել ի պատիւ դեսպան Բայբուրդեանի՝ հայ համայնքից բազմաթիւ հրաւիրեալների մասնակցութեամբ:

Յուլիսի 14-ին դեսպան Բայբուրդեանը հիւրընկալուել էր Եուտա նահանգի փոխնահանգապետ Դիդրէ Հէնդերսոնի կողմից: Զրուցակիցները քննարկել էին Հայաստանի եւ Եուտայի միջեւ բազմաբնոյթ համագործակցութեան հաստատման հեռանկարները: Գլխաւոր հիւպատոսը խնդրել էր փոխնահանգապետի աջակցութիւնը տեղի հայկական համայնքի որոշ կարիքների լուծման հարցում:

Դեսպան Բայբուրդեանն այ-

Շար.ը էջ 15

# Յայտնի են 2021 թ. «Աւրորայի» Հերոսները Շնորհման Արարողութիւնը Տեղի Կունենայ Վենետիկում



«Աւրորայ» մարդասիրական նախաձեռնութիւնը հայտարարեց 2021 թ. «Աւրորայի» հինգ հերոսների անունները, որոնց ընտրել է «Աւրորայ» մրցանակի Ընտրող յանձնաժողովը՝ նրանց ցուցաբերած խիզախութեան, նուիրուածութեան եւ ունեցած ազդեցութեան համար: Յատուկ միջոցառումը տեղի ունեցաւ Մատենադարանում, որի ընթացքում ներկաները յարգեցին «Աւրորայ» մարդասիրական նախաձեռնութեան համահիմնադիր եւ մրցանակի Ընտրող յանձնաժողովի անդամ, գիտնական եւ մեծ մարդասէր Վարդան Գրիգորեանի յիշատակը, որն օրեր առաջ հեռացաւ կեանքից: Աւանդոյթի համաձայն, 2021 թ. «Աւրորայի» հերոսների անուններն արձանագրուել են «մատեան մարդասիրաց»՝ 21-րդ դարի եզակի ձեռագիր-մատեանում, որը «Աւրորայ» մարդասիրական նախաձեռնութեան իւրայատուկ տարեգիրքն է:

«Աւրորայի» հերոսներից մէկը կդառնայ 2021 թ. «Աւրորայ» մրցանակի դափնեկիր եւ հնարաւորութիւն կստանայ շարունակելու նուիրատուութեան շղթան՝ մէկ միլիոն դոլար մրցանակը բաշխելով այն կազմակերպութիւնների միջեւ, որոնք օգնում են կարիքաւորներին: 2021 թ. «Աւրորայի» հերոսներն են.



Գրեգուար Ահոնգբոնոն (Կոտ դ'իվուար). «սբ կամիլ» ընկերակցութեան հիմնադիր, որն օգնում է Արեւմտեան Աֆրիկայում հոգեկան հիւանդութեամբ տառապող մարդկանց եւ փորձում է վերջ տալ նրանց շղթայակապ պահելու՝ տեղական անմարդկային սովորութեանը: Գրեգուար Ահոնգբոնոնն առաջադրել է երեք կազմակերպութիւն, որոնք խթանում են միջազգային համերաշխութիւնը եւ աջակցում են մտաւոր հաշմանդամութիւն ու հոգեկան հիւանդութիւններ ունեցող անձանց: Դրանք են «միջազգային զարգացման կրթութեան՝ Լանոդիերի տարածաշրջանային կոմիտէն» (ԿՐԵԴԻԼ), «լ'արշ կանադա» հիմնադրամը եւ «սբ կամիլ» ընկերակցութիւնը:

Ջուլիեն Լուսենգե (Կոնգոյի Դեմոկրատական հանրապետութիւն). մարդու իրաւունքների պաշտպան, «կանանց համերաշխութիւն՝ յանուն ներառական խաղաղութեան եւ զարգացման» (SOFEPADI) կազմակերպութեան եւ Կոնգոյացի կանանց հիմնադրամի (FFC) համահիմնադիր, որը տարիներ ի վեր օգնում է պատերազմի ընթացքում սեռական բռնութեան ենթարկվածներին: Տիկին Լուսենգեն առաջադրել է երեք կազմակերպութիւն, որոնք աջակցում են կանանց կազմակերպութիւններին, զօրացնում են գենդերային հիմքով բռնութեան զոհերին եւ օգնում ներքին տեղահանուած անձանց՝ վերաինտեգրվելու իրենց համայնքներ: Դրանք են Կոնգոյացի կանանց հիմնադրամը, Կոնգոյի համերաշխութեան լիգան եւ «մայրերի ընկերութիւն՝ յանուն զարգացման եւ խաղաղութեան» կազմակերպութիւնը:

Ռուբի Ալբայ Կաստանյօ (Կոլումբիայ). իրաւապաշտպան եւ ASOCATDAME-ի (Գիւղացիների, գիւղական աշխատողների եւ շրջակայ միջավայրի պաշտպանների Մետայի ասոցիացիա) հիմնադիր, որն աշխատում է պաշտպանել հազարաւոր կոլումբիացի գիւղացիների իրաւունքները, որոնք ենթարկւում են հետապնդումների, հարկադիր տեղահանումների եւ անհետացման: Տիկին Կաստանյօն առաջադրել է հետեւեալ երեք կազմակերպութիւնները, որոնք պաշտպանում են Կոլումբիայի գիւղացիական եւ աղքատ համայնքների իրաւունքները. Գիւղացիների, գիւղական աշխատողների եւ շրջակայ միջավայրի պաշտպանների Մետայի ասոցիացիայ (ASOCATDAME), «Նորման Պերես Բէյոյ» կլարետյեան կորպորացիա (CCNPB) եւ Գիւղատնտեսական միութիւնների ազգային դաշնութիւն (FENSUAGRO):

Աշվաք Մոհարամ (Եմեն). բժիշկ, որը կենսապահպան աջակցութիւն է ցուցաբերում Եմենի Յօդեյդայ նահանգի սովեալ բնակչութեանը, որը յայտնուել է հակամարտութեան ու շրջափակման հետեւանքով գոյացած ճգնաժամի մէջ: Բժիշկ Մոհարամն առաջադրել է երկու կազմակերպութիւն, որոնք պաշտպանում են երեխաների ապագան եւ անվճար առողջապահական ծառայութիւններ մատուցում Եմենում ընթացիկ հակամարտութիւնից տուժածներին. դրանք են «փրկէք Եմենի երեխաներին» եւ «բժիշկներ առանց սահմանների» (Եմեն) կազմակերպութիւնները:

Փօլ Ֆարմեր (ԱՄՆ). բժիշկ-մարդաբան, Հարվարդի բժշկական դպրոցի դասախօս, «առողջապահական գործընկերներ» (PIH) մի-

Շար.ը էջ 14

# Պատուաստուիլ Չուզողները



ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ

*Մէկուկէս տարի է արդէն, որ մարդկութիւնը Քորոնա կոչուող համաճարակի մը վախով կ'ապրի: Երկրագունդի ամէն տեղ տարածուած համաճարակը խանգարած է բնական կեանքի բոլոր երեւոյթները: Մեծ կարելիութիւններու տէր երկիրներ, ինչպէս Ամերիկա, Գերմանիա, Չինաստան, Հնդկաստան, Ռուսիա, Անգլիա, մեծածախս հետազօտական ջանքերով կարճ ժամանակուան մէջ պատուաստ հնարեցին՝* Pfizer-BioNTech, Moderna, OxfordAstrazeneca, Johnson & Johnson, Spoutnik V, Sinovac, Janssen *եւ այլ անուններով: Ըստ* Our World in Data-*ի հետազօտութեան, որ յունիս 2021-ին կատարուած է, աշխարհի տարածքին 170 երկիր գործածած է* Astra-Zeneca *պատուաստը, 99 երկիր՝* Pfizer-BioNTech-*ը, 57 երկիր՝* Sinopharm-*ը, 47 երկիր՝* Moderna-*ն, 43 երկիր՝* Spouthik V-*ը, 29 երկիր՝* Sinovac-*ը, 24 երկիր՝* Janssen-*ը եւ 16 երկիրներ նուազ ծանօթ դեղերով պատուաստած են իրենց քաղաքացիները: Համաշխարհային հաշուարկով՝ երկու միլիառ պատուաստում կատարուած է 190 երկիրներու մէջ եւ Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութիւնը (*World Health Organization - WHO*) կը փափաքի ունենալ առնուազն 70 առ հարիւրի պատուաստում բոլոր երկիրներուն մէջ, որպէսզի յաջողութեամբ յաղթահարուի* Covid-19 *համաճարակը: Ըստ մասնագէտներու, եթէ պատուաստումը ըլլայ 60 կամ 70 առ հարիւրի աստիճանէն վար գալիք աշնան սեմին, հաւանական է, որ ունենանք մտահոգիչ եւ վտանգաւոր համաճարակի արտակարգ իրավիճակ մը:*

*Այսպիսի գիտական եւ բժշկական տուեալներու հետ միատեղ, քիչ չէ թիւը անոնց, որոնք դէմ են պատուաստուելու՝ անձնական համոզումներէ եւ զգացումներէ մղուած:*

*Եւ բազմազան են պատճառները պատուաստի դէմ եղողներուն:*

*Ոմանք կրօնական հաւատալիքներով տարուած՝ չեն ուզեր պատուաստուիլ, թէեւ հիմնական կրօնները դէմ չեն անոր:*

*Ոմանք դէմ են պատուաստումի, որովհետեւ կը խորհին, թէ վտանգը աւելի կը կշռէ քան օգուտը, եւ այս մէկը ներկայիս, ըստ դիտորդներու, ամենամեծ խոչընդոտն է պատուաստումի:*

*Ոմանք ալ կը խորհին, թէ դեղագործական ընկերութիւնները վստահելի չեն եւ թէ անոնց միակ նպատակը իրենց արտադրութիւնները ծախելն է՝ առանց նկատի առնելու անոնց ժխտական ազդեցութիւնը մարդոց վրայ:*

*Պատուաստումի դէմ եղողները ընդհանրապէս կ'ըլլան գիտութեան հանդէպ կասկած կամ անվստահութիւն ունեցողները:*

*Առողջապահական եւ բժշկական մասնագէտներ ողջունած են պատուաստումները որպէս 20-րդ դարու լաւագոյն յաջողութիւններէն մէկը, սակայն այս կարծիքէն չեն ոմանք: Պատուաստումի ընդդիմադիր կասկածամիտները կը պատճառաբանեն, թէ չեն գիտեր ի՞նչ տեսակի քիմիական բաղադրութիւններ կը պարունակեն պատուաստները, հետեւաբար խանդավառ չեն ըլլար պատուաստուելու եւ հաւատք չեն ընծայեր բժիշկներու խորհուրդներուն, որոնք ընդհանրապէս կը յանձնարարեն պատուաստուիլ: Ըստ մասնագէտներու, սխալ ըմբռնողութիւնը ընդհանրապէս կը ստեղծէ ընդդիմութիւն պատուաստումի դէմ:*

*Իրականութիւնը սակայն, մարդկանց դուր գայ թէ ոչ, այն է, թէ մենք կը պատկանինք ընկերային կեանքի մը, որուն մէջ մեր հաւաքական առողջութիւնն ու երջանկութիւնը կախեալ է մեզմէ: Անձնական շահ կայ քաղաքացիական պատասխանատուութիւն կատարելու մէջ, զգացում մը հպարտութեան՝ հասարակաց նպատակի իրագործման մէջ: Պատուաստուելով՝ մարդ կ'ունենայ խայտանքը ազատութեամբ եւ առանց վախի շարժելու եւ շրջելու աշխարհի շուրջ: Եւ ծայրագոյն նպատակը՝ վերադարձ բնական կեանքի, կարելի է իրագործել ՄԻՄԻԱՅՆ երբ գործենք միասին:*

*Ցամենայնդէպս, վտանգի կարելիութիւնը պատուաստումի հետեւանքով շա՜տ աւելի փոքր է, քան վտանգը համաճարակի աճման եւ յառաջացման, որուն կանխարգելումին համար հնարուած եւ ստեղծուած է պատուաստը:*

*Անգլերէնով (*Free Riders*) անվճար հեծեալներ կամ ճամբորդներ (կը կոչուին մարդիկ, որոնք կ'օգտուին հանրային բարիքէն (*public good*) եւ չեն վճարեր կամ չեն զոհուիր անկէ օգտուելու համար: Անվճար հեծեալները կամ ճամբորդները անոնք են, որոնք կը վայելեն դրական արդիւնքը, որ ձեռք կը ձգուի ուրիշներու պատուաստումով - նուազ տարածում ու փոխանցում համաճարակին եւ վերջնական հօտի կամ երամի պաշտպանութիւն - սակայն կը մերժեն չնչին վտանգի ենթարկուիլ պատուաստուելով: Սարսուռ պատճառող մարտահրաւէրը անշուշտ կը պատահի, երբ մարդոց մեծամասնութիւնը կը նախընտրէ ըլլալ անվճար հեծեալ, որուն պատճառաւ հանրային բարիքը կը կործանի:*

*Զգալի է, թէ այս յօդուածը գրելու համար պէտք է որ հետազօտական պրպտումներ կատարէի, որպէսզի չգիտցած մարզի մէջ չխարխափէի: Վերոյիշեալները շատ մը տեղերէ եւ աղբիւրներէ քաղուած տեղեկութիւններ ու տեսակէտներ են: Անձամբ երկու անգամ պատուաստուած ըլլալով՝ կը զգամ, որ բերած եմ իմ բաժինը հանրային բարիքին:*

*Յօդուածս կ'ուզեմ աւարտել՝ հարց տալով բոլոր պատուաստուիլ չուզողներուն կամ անվճար հեծեալներուն, թէ արդեօք վտանգի չե՞ն ենթարկուիր, երբ բջիջային հեռաձայնով ժամերով կը խօսին, երբ օդանաւով կը թռչին, երբ վիրաբուժական գործողութեան կը յանձնուին, երբ բնականօրէն չմշակուած (*genetically modified*) սննդամթերքով կը սնանին, երբ կեանքը հեշտացնող գիտութեան բարիքներէն կ'օգտուին եւ երբ իրենց մանուկներուն դպրոց մուտքը արտօնող պատուաստումի ծրագրին (*protocol*) կ'ենթարկուին...*

*Ի՞նչն է տարբեր Քորոնայի դէմ պատուաստուելու եւ պաշտպանուելու պարագային:*

## Երկրագունտի Կլիմայական Փոփոխութիւններու Հետեւանքով

# Արտակարգ Հեղեղներ եւ Մեծ Վնասներ Արեւմտեան Եւրոպայի Մէջ



*Երկրագունտի օդերեւութաբանական հարցերով զբաղող գիտնականներու կանխատեսումներն սկսած են իրականանալ: Այս բոլորի տուն տուող պատճառը երկրագունտի եւ կենսոլորտի աստիճանական ջերմութիւնն է: Երեւոյթ մը՝ որ ահազանգային վիճակ ստեղծած է յատկապէս վերջին երկու տասնամեակներու ընթացքին: Այս կապակցութեամբ նման եզրակացութիւններու յանգած են գիտահետազօտութիւններ կատարողները: Իբրեւ մեծ ապացոյց հիւսիսային բեւեռի արտակարգ սառցահալը եւ բովանդակ երկրագունտի ջերմաստիճանի դանդաղ բայց յարատեւ բարձրացումը: Հակասական եւ անբնականոն երեւոյթներու յառաջ գալն ալ ասոր հետեւանքն է...: Օրինակ եթէ շրջանի մը մէջ անբնականոն երաշտ կայ (Գալիֆորնիա) այլ շրջանի մէջ անբնական հեղեղներ ու յորդառատ անձրեւ կայ (Արեւմտեան Եւրոպա):*

*Վերջերս ապացուցուեցաւ որ Գալիֆորնիոյ մէջ նուազ անձրեւներու պատճառով, ստեղծուած է ջուրի մեծ տագնապ մը: Ջրամբարներու մակարդակը նուազած է 40 առ հարիւրի, մեծ վնաս պատճառելով բնակչութեան եւ յատկապէս երկրագործութեան:*

*Պարագան տարբեր է Արեւմտեան Եւրոպայի մէջ: Արդարեւ անցնող շաբթուան ընթացքին, յորդառատ անձրեւներու հետեւանքով, տեղի ունեցան ջրհեղեղներ, փլուզումներ, հողերու սահանքներ: 150,000 հոգի օրեր շարունակ մնացած են առանց ելեկտրականութեան: Կան մօտ 200 մեռեալներ եւ նիւթական ահռելի վնասներ, յատկապէս Գերմանիոյ մէջ:*

*Գերմանիոյ վարչապետ Անկելա Մերգել, այցելելով աղէտի վայրերը ըսաւ որ եղածը «անիրական ուրուական մըն է...»: Արդարեւ Գերմանիա մեծապէս տուժած է այս ջրհեղեղէն, մասնաւորաբար Շուլտի շրջանը: Տուժած են նաեւ Պելճիքա, Հոլանտա, Լիւքսեմպուրկ, Աւստրիա եւ Չեխիա: Ներկայիս երկաթուղային հաղորդակցութեան կապերը խզուած են Գերմանիոյ եւ Չեխիայի միջեւ: Այսպիսով ողողումներն ընդարձակեցին իրենց աշխարհագրութիւնը...:*

*Այս կապացկութեամբ սուր քննադատութեանց ենթարկուած են օդերեւութաբաններն ու կարգ մը գիտնականները, որոնք անտեղեակ պահած են աղէտի ենթակայ շրջաններու բնակիչները: Գտնուած են նաեւ քանի մը օդերեւութաբաններ որոնք ժամանակէ առաջ ալ ահազանգած են ըլլալիքի մասին, բայց բնակիչներն անհոգ եւ անփոյթ գտնուած են: Սակայն անակնկալ եւ ահաւոր ջրհեղեղը անելի մատնած է հազրաւոր բնակիչներ: Առատ անձրեւներու պատճառով, շրջանի մը համար անել կացութեան մատնուած է Մոսկուայի «Շէրէմէթեւօ» օդակայանը:*

*Կ'ըսուի թէ նման ահաւոր ջրհեղեղներ տեղի ունեցած են այդ շրջաններու մէջ մասնաւորաբար 1790ին եւ 1910-ին:*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

# Նոր Օրերու Մեր Հերոսները

ԶԱՐՄԻՆԷ ՊՕՂՈՍԵԱՆ

*Դուք ծանօ՞թ էք այս անուններուն: Արուսեակ Մարգարեան, Արմինէ Պապիկեան, Գաթրինա Շաքարեան, Կարէն եւ Արամ Սբէնճեան եղբայրներ...*

*Ի՞նչ կ՚ըսեն այս անունները ձեզի:*

*Դուք կը ճանչնա՞ք այս անուններուն ետին թաքնուած այսօրուան երիտասարդները: Անմնացորդ նուիրումով, հայրենիքի սիրով տոչորուած մեր հաւատացեալ նուիրեալներն են անոնք: Հաւատք՝ հայրենիքի, հաւատք հայրենի նոր սերունդի ապագային:*

*Լաւ ուրեմն, ուրկէ՞ կրնամ սկսիլ:*

*Եթէ մէկ հասարակաց գիծով կարելի ըլլայ ընդգծել այս երիտասարդներուն նուիրումը - պիտի ըսեմ բոլորն ալ Հայ են, Նիւ Եորքի Սրբոց Նահատակաց Ամէնօրեայ Վարժարանի (ՍՆԱՎ-ի) ոգիով տոգորուած հայորդիներ են, որովհետեւ... ոչ միայն անոնք Հայ ամէնօրեայ վարժարան առաջնորդուած են իրենց ծնողներուն շնորհիւ, այլ՝ շարունակած են մնալ հաւատարիմ իրենց արեան ձայնին:*

*Ես կը ճանչնամ զիրենք երբ տակաւին 4-5 տարեկան ՍՆԱՎ-ի մանկամսուրի աշակերտներս էին: Դողդոջ քայլերով մանուկներ՝ որոնք ներս մտան Մեսրոպեանի լոյսի օճախ- Նիւ Եորքի միակ Հայ Ամէնօրեայ վարժարանէն ներս, իրենց առաջին քայլերը առաջնորդող՝ ծնողներուն ձեռքէն բռնած, շուարած, բաժանումի վախով վարակուած մանուկներու տեսքով:*

*Երկար չտեւեց այդ անորոշութեան եւ վախի զգացումը: Անոնք դարձան քաջ, ուսումնատենչ, հայրենիքի սիրով տոգորուած անհատներ, նախակրթարանի շրջանաւարտներ, ապա՝ համալսարանաւարտներ, մասնագէտներ իրենց ընտրած ասպարէզներուն մէջ:*

*Ու հիմա՞... տասնամեակներ ետք, արդէն դիմատետրի էջս կը լեցուի իրենց կատարած հայրենանուէր աշխատանքներուն մասին գրութիւններով, տեսերիզներով, հարցազրոյցներու շարանով: Կը հաւատա՜ն ապագային, հայրենի ապագան կերտող ներկա՛յ սերունդին:*

*Եկէք մէկ առ մէկ ծանօթանանք անոնց անուններուն հետ իրենց տարած աշխատանքներուն:*



***Arousiag Markarian- Արուսեակ Մարգարեանին*** *նշանաբանը նոր սերունդին «ճկուն մտածողութիւն սերմանելն է, որ մարդը կարողանայ դիմակալել ժամանակակից աշխարհի մարտահրաւէրներուն, ու աւելին՝ ինքը որպէս անհատ կարենայ փոփոխութիւն բերել աշխարհին»: Հետեւաբար, Արուսեակ հաւատարիմ իր ներքին ձայնին հաստատուած է Արցախ, եւ դարձած է «ԹՈՒՄՕ» ի ստեղծարար «տեխնոլոգիաներ-ի» Ստեփանակերտի գրասենեակի ղեկավարը: Նկատի առնելով որ ճարտարարուեստը (Technology- տեխնոլոգիա) արդէն իսկ ոչ միայն մեր կենցաղի անբաժանելի մաս կը կազմէ, այլ նաեւ մեր ապագան կանխորոշող եւ մեր կեանքի որակը հաստատող ուղիներէն կարեւորագոյնն է:*

*Արուսեակը հաւատքով կը մօտենայ իր պաշտօնին, կը հաստատէ թէ այդ ուսանողներուն ներարկուած գիտութիւնն ու պատանիներուն ստեղծարար միտքը կրնան վահան հանդիսանալ մեր ժողովուրդին համար, որպէսզի «կարենան մասնագիտանալով առաջնային դերեր ստանձնել», կը շեշտէ ան:*

*Անցնող Սեպտեմբերին Արցախեան պատերազմի ահաւոր հետեւանքները խոր կսկիծով կը յիշէ իւրաքանչիւր հայ: Արուսեակ կը հաւատայ նոր սերունդը սպառազինելուով ճարտարարուեստի նրբութիւններով եւ ամբարուած գիտելիքներով է որ պիտի կարենան յաղթահարել սպառնացող գալիք չարիքները:*

*«Մեր ուսանողը ոչ միայն պէտք է կարենայ օգտուիլ տեխնոլոգիաներէն՝ իրեն համար լաւագոյն կրթական ուղին որսալու, այլ նաեւ հետագային կարենայ զարգացնել ստացած պաշարը, եւ միւսներուն հետ կիսուելով կարենան հարստացնել երկիրն ու աշխարհը» կը շեշտէ Ստեփանակերտի գրասենեակի «ԹՈՒՄՕ» ի ստեղծարար աշխատանքներուն ղեկավար՝ Արուսեակ Մարգարեանը:*



*Katrina Shakarian-* ***Գաթրինա Շաքարեանին*** *ընտրած ասպարէզը մանկավարժութիւնն է: Որակաւոր ուսուցիչներ ներգրաւել Հայաստանի սահմանային շրջաններու գիւղերու եւ աւաններու մէջ դասաւանդելու, գիտակից սերունդ պատրաստելու: Ան կոչ կ՚ուղղէ բոլոր անոնց որ մանկավարժութիւնը ընտրած են որպէս իրենց ապագայ ասպարէզ: Իր առաքելութեան ծիրը ընդարձակ է հասնելու, հասցնելու հասկցնելու թէ որքան անհրաժեշտ է հայրենի գիւղական, մանաւանդ սահմանային շրջաններուն մէջ նուիրուիլ դաստիարակչական- ուսումնական աշխատանքին - գէթ մէկ կամ երկու տարիով:*

*Հայաստանի մէջ ապրելու եւ աշխատելու իսկապէս բացառիկ հնարաւորութիւն է այս մէկը որ կարելի է իրականացնել՝* Teach For Armenia*- Դասաւանդէ Յանուն Հայաստանի միջոցաւ- բոլոր անոնք որ նուիրուիլ կը փափաքին մանկավարժական ասպարէզին:*

*Աշխատանքի կրնան ընդունուիլ նորաւարտ համալսարանականներ եւ կամ ասպարէզին նուիրեալ այլ անհատներ, Հայաստանի գիւղական շրջաններուն մէջ մէկ կամ երկու տարի պայմանաժամով դասաւանդելու համար:*

*Ծրագրին կրնան մասնակցիլ փորձառու մանկավարժները, ինչպէս նաեւ ապագացու մանկավարժները: Գաթրինան պատրաստակամութիւն կը յայտնէ հետաքրքրուողներուն օգնել եւ համապատասխան պատասխանատու անձերուն հետ կապուելով գործակցիլ, կամ՝ այցելել հետեւեալ կայքը յաւելեալ մանրամասնութիւններուն համար:* http://diaspora.gov.am/en/programs/25/fellowship#b96




*Armine Babikian-* ***Արմինէ Պապիկեանը****-տակաւին օրօրոցի մանուկ մօրը գրկին մէջ սկսած է յաճախել ՍՆԱՎ՝ իրմէ առաջ երեք եղբայրներուն յաճախած տարիներու ընթացքին: ՍՆԱՎ-էն վկայուելէն ետք, իր ուսումը կը շարունակէ նախ Փենսիլվանիոյ Տրէքսէլ Համալսարանէն ստանալով իր Պսակաւոր եւ ապա Նիւ Եորքի Գօլումպիա համալսարանէն Մագիստրոս վկայականները, որպէս վերականգնողական բուժգէտ:*

*Կ՚ակնկալէ նաեւ որ Սեպտեմբերի 2-ին Թօրոնթոյի համալսարանէն պիտի ստանայ վերականգնողական գիտութիւններու եւ համաշխարհային առողջութեան գիտութիւններու թեկնածուի գիտական աստիճան:*

*Արմինէն իր ընտրած ասպարէզին աւելի լաւ հմտանալու համար իրեն փորձադաշտ կ՚ընտրէ Հայաստանը, ուղղակիօրէն ծանօթանալու իր հայրենակիցներուն կարիքներուն: Կամաւոր կ՚արձանագրուի «*Birthright Armenia*»-ին, սկզբնական շրջանին որպէս դիտող, ուսումնասիրելու եւ ապա ըստ այնմ իր արհեստավարժի օգնութիւնը նուիրաբերելու հայրենի քոյր եղբայրներուն:*

*2017-էն սկսեալ Արմինէին հայրենիքին հետ կապուածութիւնը* Birthright Armenia*-ի միջոցաւ աւելի եւս կը շեշտուի, եւ իր նուիրումի ոգին կ՚արմատաւորուի ոչ միայն հայրենի մշակոյթի հանդէպ այլ նաեւ մասնագիտական առումով ալ սատարելու Հայաստանին եւ հայրենի ժողովուրդին:*

*Գործնական քայլերու անցնելով Արմինէն կը յաջողի գրել եւ լոյս ընծայել Անգլերէն ուղեցոյց մը եւ ապա՝ թարգմանաբար Հայերէն առանձին հատորներով:*

*Իր առօրեայ փորձառութիւններէն ելլելով Արմինէն որոշած է այս ուղեցոյց գրքոյկով հաշմանդամ երեխաներու թէ չափահասներու հետ աշխատող մասնագէտներուն, ախտաբուժագէտներուն, նոյնիսկ սկսնակներուն գործը դիւրացնել, այս գրքոյկին մէջ ներառնելով անպիսի յստակ ու պարզ բացատրութիւններ գործնական թելադրութիւններով եւ կիրարկելի ձեւերով որ վստահաբար պիտի դիւրացնէ աշխատանքը թերաճ երեխաերեւ թէ պատերազմէն հաշմանդամ վերադարձած հայորդիներուն հետ:*

*Արմինէն իր աշխատասիրութեան լոյս ընծայման համար հովանաւորութիւնը վայելած է* Armenia Next Step *շրջանաւարտներու ֆոնտին, որ յանձն առած է տպագրութեան մեկենասութիւնը: Նոյնպէս ան շատ երախտապարտ է «Հայաստանի Մանուկներ» հիմնադրամին (*COAF*) եւ շարք մը այլ հոգատար անհատներու որոնք հաւատացին իր աշխատանքին կարեւորութեան նիւթապէս թէ բարոյապէս նեցուկ հանդիսանալով:*



*Aram & Garen Spendjian-* ***Արամ եւ Կարէն Սբէնճեան*** *եղբայրներուն Հայաստանի հետ սերտ հոգատարութիւնը սկսած է երբ Կարէնը որպէս արհեստավարժ փորձառու պասքէթպոլիստ ընտրուած էր աշխարհի ախոյեանութեան մրցումներուն Հայաստանը ներկայացնող խումբին մաս կազմելու:*

*Հայաստան գտնուած միջոցին Կարէնը տեսաւ եւ զգաց թէ որքա՜ն անհրաժեշտ է հայրենի քոյր-եղբայրները փոքր տարիքէն խանդավառող գնդակ թէ պասքէթի օղակներ հայթայթել, գանոնք թէ ֆիզիքապէս մարզելու եւ թէ Հայաստանի ամէն շրջաններուն մէջ խմբային մարզական խաղերու եւ հաւաքական մրցոյթներու պատրաստելու: Ան գործակցելով Մէթ Մատոյեանի եւ Վիգէն Սարգիսովին հետ, միասնաբար յաջողեցան 2017-ին հիմնելու տրազերծ (*Not for profit*)* Hoops4Hayastan *կազմակերպութիւնը:* #armenia,#hoopsforhayastan

*Իսկ Կարէնին երէց եղբայրը՝ Արամը Ֆլորիտա-Մայամի Համալսարանէն ստացած էր Պսակաւոր գիտութեան վկայականը մասնագիտութիւն ընտրելով կենսաբանութիւն եւ Առեւտուրի բաժին: Երբ իր կրտսեր եղբայր Կարէնը որպէս շատ լաւ Պասքէթպոլիսթ ընտրուած էր Հայաստանի առաջին խումբին մաս կազմելու եւ մասնակցելու ինք ալ ամբողջական ձեւով կապուեցաւ հայրենիքին օգնելու կանչին:*

*Իր նուիրուածութիւնը շարունակուեցաւ Հայաստանի տնտեսութեան աճին սատարող մէկ այլ գործարքով: Արամ իր հօր՝ Աշոտին հետ 2019-ին ձեռնարկեցին* Lorens NYC *մակնիշով արտադրողական ընկերութիւն մը, որուն նպատակն է արեւմտեան աշխարհի բարձրորակ արտադրութիւնները ներկայացնել Հայաստանի շուկային: Իրենց աշխատանքներուն մասին աւելի*

Շար.ը էջ 15

## Արցախի Մասին Ուք Հետազօտական Ծրագիրներ Նպաստ կը Ստանան Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Կողմէ



Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքը մեկնարկեց կրթաթոշակներու նոր ծրագիր մը Յունուար 2021-ին, որ կը կեդրոնանայ Արցախի մասին հետազօտական աշխատանքներու վրայ: Այս նախաձեռնութիւնը մաս կը կազմէ Բաժանմունքին «Հայագիտութեան կարճաժամկէտ կրթաթոշակ»-ի ծրագիրին, եւ կը նպատակադրէ քաջալերել Արցախի վերաբերեալ ժամանակակից ուսումնասիրութիւնները, յատուկ ուշադրութիւն դարձնելով յետ-1994-եան ժամանակաշրջանին, ինչպէս նաեւ առկայ կացութեան:

Դիմումներու առաջին փուլին (Մարտ 1-էն Ապրիլ 20), չորս տարբեր երկիրներէ դիմումներ կատարուեցան. Հայաստան, Ֆրանսա, Լիբանան եւ Միացեալ Նահանգներ: Այս փուլին, ութ դիմողներ կրթաթոշակ ստացան, հաշուի առնելով դիմումներուն որակը եւ ուսումնասիրութեան առարկաներուն այժմէականութիւնը:

Նիւթերն են՝ արտաքին քաղաքականութիւն եւ ապահովութիւն, միջազգային օրէնք, մշակութային ինքնութիւն, սեռային ներառականութիւն, խաղաղութեան հաստատում, սնունդի ապահովութիւն, ինչպէս նաեւ բնապահպանական հարցեր:

Կրթաթոշակներուն ընդհանուր գումարը 30,000 եւրօ է, որ յատկացուեցաւ հետեւեալ դիմողներուն.

- Ատրինէ Գրիգորեան (ԱՄՆ)
- Դկտ. Ալբերթ Հայրապետեան (Հայաստան)
- Արմէն Ասրեան (Հայաստան)
- Դկտ. Քարոլ Ման (Ֆրանսա)
- Ղարիպ Յարութիւնեան (Հայաստան)
- Դկտ. Իկոռ Տորֆման-Լազարեւ (Ֆրանսա)
- Դկտ. Ռուբէն Էլամիրեան (Հայաստան)
- Դկտ. Թալին Փափազեան (Ֆրանսա)

Կը շնորհաւորենք բոլոր նպաստառուները, եւ մեծ հետաքրքրութեամբ կը սպասենք այլազան ուսումնասիրութիւններուն արդիւնքներուն:

Արցախի մասին հետազօտական կրթաթոշակներու այս ծրագիրը պիտի ունենայ դիմելու երկրորդ փուլ մը? Յուլիս 1-էն մինչեւ 31 Օգոստոս 2021:

Յաւելեալ տեղեկութիւններու համար այցելել ծրագիրին էջը?

https://gulbenkian.pt/en/bolsas-lista/short-term-research-grants-for-the-study-ofnagorno-karabakh-ii/

## Հայկ Մարտիրոսեանը Դուրս Հանեց Մամետեարովը Աշխարհի Բաժակի Պայքարէն




Հայաստանի ճատրակի տղամարդոց հաւաքականի անդամ՝ Հայկ Մարտիրոսեան աշխարհի բաժակի խաղարկութենէն դուրս հանեց Ատրպէյճանի ուժեղագոյն ճատրակ խաղցող Շախրիյար Մամետեարովը:

«Արմէնփրէս»-ի հաղորդմամբ՝ Սոչիի մէջ ընթացող ճատրակի աշխարհի բաժակի խաղարկութեան 3-րդ շրջանին Մարտիրոսեան եւ Մամետեարով մրցակցեցան tiebreak-ին, ուր արագ ճատրակի առաջին խաղին Հայկ Մարտիրոսեան սեւ խաղաքարերով պարտութեան մատնեց ատրպէյճանցիին: Արագ ճատրակի երկրորդ խաղը, ուր Մարտիրոսեան կը խաղար սպիտակ խաղաքարերով, աւարտեցաւ ոչ-ոքի: Երկու խաղերու ընդհանուր հաշուով Շախրիյար Մամետեարով դուրս մնաց հետագայ պայքարէն:

Կրանտմասթըր Հայկ Մարտիրոսեանի յաջորդ մրցակիցը աշխարհի բաժակի խաղարկութեան 4-րդ շրջանին խրուաթ Անտէ Պրիչն է:

Պայքարէն դուրս մնացած են Գաբրիէլ Սարգսեանը, Շանթ Սարգսեանը, Յովհաննէս Գաբուզեանը եւ Էլինա Դանիէլեանը: Իսկ աւելի վաղ յայտնի դարձած էր, որ կրանտմասթըր Լեւոն Արոնեան առհասարակ չի մասնակցիր աշխարհի բաժակի խաղարկութեան առողջական խնդիրներու պատճառով: Արոնեան աշխարհի գործող բաժակակիրն է:

Ճատրակի աշխարհի բաժակի խաղարկութիւնը այս տարի տեղի կ'ունենայ ռուսաստանեան Սոչի քաղաքը: Տղամարդոց մրցաշարին կը մասնակցին 206, իսկ կանանց մրցաշարին՝ 103 մասնակից: Այն կ'եզրափակուի Օգոստոս 6-ին:

## Յայտնի են 2021 թ. «Աւրօրայի» Հերոսները

Շարունակուած էջ 11-էն

Ջազգային շահոյթ չհետապնդող կազմակերպութեան համահիմնադիր եւ գլխաւոր ռազմավար, որը ժամանակակից բժշկագիտութեան օգուտները հասցնում է նրանց, ովքեր ամէնից շատ ունեն դրա կարիքը: Փոլ Ֆարմերը առաջադրել է երկու կազմակերպութիւն, որոնք առողջապահական ծառայութիւններ են մատուցում աշխարհի ամենաաղքատ համայնքներին եւ ստեղծում են սոցիալական բժշկութիւն ուսուցանողների ու պրակտիկ գործունէութեամբ զբաղուող մասնագէտների համաշխարհային շարժում: Դրանք են «առողջապահական գործընկերներ» եւ «հաւասար առողջութիւն» կազմակերպութիւնները:

«Ինձ համար մեծ պատիւ է ունենալ հնարաւորութիւն՝ ճանաչման արժանացնելու ամբողջ աշխարհից ընտրուած այս ականաւոր կանանց ու տղամարդկանց: 2021 թ. «Աւրօրայի» հերոսներն անհատներ են, որոնք իսկապէս հաւատում են մարդու հիմնարար իրաւունքներին եւ իրենց կեանքը նուիրել են անբարենպաստ վայրերում գտնուող մարդկանց օգնելու գործին: Նրանք ճանաչման են արժանանում նաեւ այն հսկայական ազդեցութեան համար, որ նոյնիսկ մէկ անհատը կարող է գործել՝ օգնելով հազարաւոր մարդկանց եւ միաժամանակ, որ ամենակարեւորն է՝ ոգեշնչելով միլիոնաւոր մարդկանց», - ասաց «Աւրօրայ» մրցանակի Ընտրող յանձնաժողովի նախագահ Լորդ Արա Դարզին:

«2021 թ. «Աւրօրայի» հերոսների ձեռքբերումները ցոյց են տալիս գործելու նրանց կամքը՝ արձագանքելով իրենց շուրջ գտնուող մարդկանց կարիքներին: «Աւրօրան» խորապէս հաւատում է բարելաւելու եւ կեանքեր փրկելու՝ մարդկութեան ուժին եւ հանդէս է եկել «երախտագիտութիւնն՝ ի գործ» գաղափարով, որը բնորոշում է մարդկային ոգին՝ մարդասիրական գործունէութիւն ծաւալելու ունակութեամբ: Հերոսները, որոնց մենք այսօր մեծարում ենք, այն օրինակելի դէմքերն են, որոնց կարիքն աշխարհն այժմ ունի աւելի, քան երբեւէ»,- նշեց «խաղաղութեան տուն» խնամքի տան եւ REMA հիւանդանոցի հիմնադիր ու «Աւրօրայ» մրցանակի առաջին դափնեկիր Մարգարիտ Բարանկիցեն:

Միջոցառման ընթացքում «Աւրօրայ» մարդասիրական նախաձեռնութիւնը պաշտօնապէս յայտարարեց նաեւ 2022 թուականի «Աւրօրայ» մրցանակի առաջադրումների փուլի բացումը եւ կոչ արեց բոլորին առաջադրելու մեր օրեայ ոգեշնչող հերոսների: Նոյն օրն աւելի վաղ «Աւրօրայի» ներկայացուցիչները ոգեկոչել էին Հայոց ցեղասպանութիւնը՝ մասնակցելով Ծիծեռնակաբերդի յուշահամալիրում 20-րդ դարի առաջին ցեղասպանութեան զոհերի յիշատակին նուիրուած ծաղիկներ խոնարհելու արարողութեանը:

### Շնորհման Արարողութիւնը Տեղի Կունենայ Վենետիկում

«Աւրօրայ» մարդասիրական նախաձեռնութիւնը յայտարարել է, որ 2021 թ. «Աւրօրայ» մրցանակի միջոցառումները տեղի կ'ունենան Վենետիկում (Իտալիա) 2021 թ. Հոկտեմբերի 8-10-ը: Բացի մրցանակի շնորհման արարողութիւնից, որի ընթացքում յայտնի կդառնա 2021 թ. «Աւրօրայ» մրցանակի դափնեկիրը, եւ Aurora Dialogues քննարկումներից, հիւրերն ու մասնակիցները, այդ թւում՝ «Աւրօրայ» մրցանակի Ընտրող յանձնաժողովի անդամները, «Աւրօրայի» հերոսներն ու «Աւրօրայ» համայնքի այլ ներկայացուցիչներ, լայն հնարաւորութիւն կ'ունենան ուսումնասիրելու տեղի հայկական հարուստ ժառանգութիւնը:

2021 թ. «Աւրօրայի» միջոցառումները կ'անցկացուեն Վենետիկում, այդպիսով «Աւրօրայ» մրցանակի շնորհման արարողութիւնն առաջին անգամ տեղի կունենայ Եւրոպայում, ինչն էլ կ'ընդգծի սերտ կապը համաշխարհային կարեւորութեան մշակութային այս կենտրոնի եւ «Աւրօրայի» գաղափարի միջեւ, որը խորապէս արտայայտում է յարգանքը մարդկային կեանքի հանդէպ, ինչի կրողն է իւրաքանչիւր հայ եւ «Աւրօրայ» համաշխարհային շարժման իւրաքանչիւր անդամ: Սա կը լինի նաեւ «Աւրօրայ» մրցանակի շնորհման առաջին ոչ առցանց արարողութիւնը կորոնավիրուսի համավարակի բռնկումից յետոյ:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

## ՀՀ Գլխաւոր Հիւպատոսութիւնը

Շարունակուած էջ 11-էն

*ցելել էր Պրովօ քաղաքի Բրիգհամ Եանկ համալսարան եւ աշխատանքային ճաշ ունեցել Քենեդիի միջազգային հետազօտութիւնների կեդրոնի ղեկավարութեան, ինչպէս նաեւ քաղաքագիտութեան եւ միջազգային յարաբերութիւնների դասախօսների հետ: Նրանք խորքային քննարկում էին անցկացրել Հարաւային Կովկասում ձեւաւորուած իրավիճակի վերաբերեալ:*

*Նա նաեւ այցելել էր Եութայի հովտի համալսարան եւ հիւրընկալուել միջազգային կապերի պատասխանատու Բալդոմերօ Լագոյի կողմից: Նրանք քննարկել էին վերջինիս նախաձեռնած միջազգային դիւանագիտական համաժողովին առնչուող հարցեր:*

*Յուլիսի 15-ին տեղի էր ունեցել «Եութա - Հայաստան. առեւտրի եւ ներդրումների հնարաւորութիւններ» խորագրի ներքոյ գործարար կլոր սեղան: Այն կազմակերպել էր Յութայի Համաշխարհային առեւտրի կեդրոնը, Նահանգապետի տնտեսական զարգացման գրասենեակը եւ Սոլթ Լէյքի առեւտրաարդիւնաբերական պալատը: Դեսպան Բայբուրդեանը մինչ գործարար կլոր սեղանը հանդիպում էր ունեցել Եութայի Համաշխարհային առեւտրի կեդրոնի նախագահ եւ գործադիր տնօրէն Մայլզ Հանսենի հետ: Նրանք քննարկել էին ձեւաւորուող համագործակցութեան ուղիները եւ առաջիկայ քայլերի տրամաբանութիւնը՝ ուղղուած Հայաստանի եւ Եութայի միջեւ գործարար կապերի խթանմանը: Մասնակիցներին ողջունել էին Եութայի Նահանգապետի տնտեսական հնարաւորութիւնների գրասենեակի գործադիր տնօրէն Ռայան Սթարքը եւ Եութայի Համաշխարհային առեւտրի կեդրոնի միջազգային ներդրումների գծով փոխնախագահ Դեյվիտ Կարլբախը: Եութայի Նահանգապետի տնտեսական հնարաւորութիւնների գրասենյակի միջազգային առեւտրի, դիվանագիտութեան եւ արարողակարգի հարցերով տնօրէն Ֆրանց Կոլբը ներկայացրել էր Եութայի նահանգը՝ գործարար կեանքի տեսանկիւնից: Դրանից յետոյ դեսպան Արմէն Բայբուրդեանը հանդէս էր եկել զեկոյցով եւ տեսաֆիլմ ներկայացրել՝ ընդգծելով Հայաստանում գործարարութեամբ զբաղուելու համեմատական առաւելութիւնները եւ հայկական բարձր տեխնոլոգիաների ընկերութիւնների՝ Եութայի շուկայ մուտք գործելու ներուժը: Նա պատասխանել էր նաեւ մասնակիցների հարցերին: Միջոցառմանը ներկայ էր Եութայի նահանգային սենատոր Քըրք Կալիմորը:*



*Գլխաւոր հիւպատոսը այցելել էր նաեւ Սոլթ Լէյք Սիթիի Մարդասիրական կեդրոն եւ հիւրընկալուել իր պատուին կազմակերպուած պաշտօնական ընթրիքին՝ Էլ Դիիէս եկեղեցու առաջնորդների կողմից:*

---

## Նոր Օրերու Մեր Հերոսները

Շարունակուած էջ 13-էն

*մանրամասնութիւններու համար կրնաք այցելել հետեւեալ կայքը: https://www.youtube.com/watch?v=hc1WsQyxjVg Kandid Koffee - interviews Garen & Aram Spendjian - YouTube*

*Հետեւելով այս հինգ երիտասարդներուն ստեղծագործ ու հայրենանուէր աշխատանքներուն կրկին ու կրկին կը հաստատուի Հայ ընտանիքին կարեւոր դերը, բարոյական ու մարդկային սկզբունքներով առաջնորդող ծնողքին դաստիարակութիւնը:*

*Հարցումիս պատասխանելով այս հինգ երիտասարդներն ալ երախտապարտ էին իրենց ծնողներէն ստացած գուրգուրանքին, անոնց առաջնորդած ուղեգիծին- ըլլան անոնք Հայ Ամէնօրեայ Վարժարան արձանագրելով թէ քաջալերելով որ անոնք մաս կազմեն Հայ կազմակերպչական տարբեր խմբաւորումներու -(ACYOA-AYF-AGBU-YPA-Camp Nubar-Camp Hayasdan-Camp Vartan-Camp Ararad, Birthright Armennia..եւլնգգ) եւ գործօն մասնակցութիւն բերելու հայանպաստ ու հայրենանուէր գործունէութիւններու:*

*Անցնող աշնան մեր հազարաւոր մատղաշ սերունդին կորուստներովը տակաւ մխացող հոգիներուն ու կոտտացող սրտերուն համար սպեղանիի զօրութիւնը կու տայ նման հաւատացեալ երիտասարդներու կամքն ու ներկայութիւնը:*

*Ապրի՛ք Հայրենի շունչով տոգորուած Հայորդիներգգգ մաղթենք որ ձեր հետեւորդները բազմանան:*

**www.massispost.com**


# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 125,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**

Name: -------- ---------------------------------
Address: ---------------------------------------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: --------------
Tel :------------------------
Email: --------------------------



# ԱՐԱՐԱՏ-Ը ԿԱՆԳՈՒՆ ՊԱՀԵՆՔ

Մայրիներու յաւերժական երկիր եւ հայկական սփիւռքի բաբախուն սիրտը հանդիսացող Լիբանանը, ցաւօք սրտի, օրէ օր աւելիով կը հիւծի տնտեսական սուր ճգնաժամին հետեւանքով:

Գոյութենական պայքար կը մղեն Լիբանանի բոլո՛ր կառոյցները, բոլո՛ր հաստատութիւնները, հայցելով նիւթական աջակցութիւն՝ այս աննախադէպ տագնապալի օրերը յաղթահարելու համար:

Արդ, ութսունչորսամեայ «Արարատ» օրաթերթը այսու կոչ կ՛ուղղէ իր աշխարհատարած ընթերցողներուն եւ բարեկամներուն՝ ապաւինելով անոնց բարձր գիտակցութեան եւ հայ մամուլի գոյերթը պահպանելու անոնց նախանձախնդրութեան:

Սիրելի ընթերցող,
Սրբազան լեռ Արարատին անունը կրող մեր լրագիրը այսօր կարիքը ունի իւրաքանչիւր հայորդիի լումային, ամէն ոք իր կարողութեան սահմաններուն մէջ: Ձեր նուիրաբերած ամէն մէկ դահեկանը պիտի ծառայէ յանուն այս նշխարի գոյատեւման ու յառաջընթացին:

«Արարատ» աւելի քան ութսուն տարի եղած է հայ անհատին ձայնն ու խօսափողը. այժմ մեր հերթն է ձայն տալու եւ զօրավիգ կանգնելու անոր, սատարելով անոր նուիրական առաքելութեան անխափան երթին:

**Կանգուն պահենք «Արարատ»ը,**
**որպէսզի «Արարատ»ն ալ մեզ կանգուն պահէ:**

*** Նուիրատուութեան համար կապ հաստատել՝**
**whatsapp: +961 3 542 782**
**e-mail: araradoratert@gmail.com**

## Հայ Ողիմպիականները Մեկնեցան Թոքիօ



Հայաստանի շարք մը մարզիկներ Յուլիսի 19-ին մեկնած են ճափոնի մայրաքաղաք Թոքիօ, ուրտեղ կը մասնակցին 32-րդ ամառային Ողիմպիական խաղերուն: Անոնց մէջ էին Խաղերու առաջին օրերու մասնակիցները՝ բռնցքամարտիկներ Կորիւն Սողոմոնեանը, Արման Դարչինեանը, Յովհաննէս Բաչկովը, ծանրորդներ Սիմոն Մարտիրոսեանը, Իզապելլա Յայլեանը, սպորտային մարմնամարզիկ Արթուր Դաւթեանը, ճիւտոյիստ Ֆերդինանդ Կարապետեանը եւ լողորդներ Արթուր Բարսեղեանն ու Վարսենիկ Մանուչարեանը:

Ողիմպիականներուն Թոքիօ կ՚ուղեկցին հաւաքականներու գլխաւոր մարզիչները, անձնական մարզիչները:

## Վրաստանի Ողիմպիական Հաւաքականի Կազմին Մէջ Հայ Մարզիկ Մը Կը Մասնակցի Թոքիօ-2020-ին



Վրաստանի Ողիմպիական հաւաքականի կազմին մէջ Թոքիոի մէջ կայանալիք Ողիմպիական խաղերուն կը մասնակցի հայ մարզիկ մը. Աթլետիկայի մարզաձեւի գնդի հրման մրցումներուն Վրաստանի մարզական դրօշի ներքեւ հանդէս կու գայ Վրաստանի բազմակի ախոյեան եւ ռեկորտակիր, Համահայկական հինգ խաղերու մասնակից, վերջին չորս խաղերու յաղթող ու Համահայկական խաղերուն գնդի հրման (թեթեւ աթլետիկա) մարզաձեւի ռեկորդակիր (19,26 մեթր), Թիֆլիսի բնակիչ Բենիկ Աբրահամեանը:

«Արմենփրեսի» փոխանցումով՝ 36-ամեայ Բենիկ Աբրահամեանի համար Թոքիոյի խաղերը երկրորդն են, ան 2016 թուականին Վրաստանի հաւաքականի կազմին մէջ մասնակցած է նաեւ Ռիօ Տէ Ժանեյրոյի Օլիմպիական խաղերուն:

## Արթուր Ալեքսանեան. Երեւի Հիմա Աւելի Հանգիստ եմ, Քան Ռիոյի Ողիմպիական Խաղերէն Առաջ



Յաջողութիւնս կրկնելու պատասխանատուութիւն կը զգամ, պարտաւոր ենք մեր երկրի պատիւը բարձր պահել: Թոքիօ-2020-ի մասին խօսելով միանգամից կը պատկերացնեմ ողիմպիական ոսկէ մետալը: Կը ցանկամ դառնալ կրկնակի ողիմպիական ախոյեան:

Այս մասին NEWS.am Sport-ի թղթակցի հետ զրոյցի ատեն ըսած է յունահռոմէական ոճի ըմբշամարտի Ռիոյի Ողիմպիական խաղերու ախոյեան, աշխարհի եռակի, Եւրոպայի հնգակի եւ Եւրոպական խաղերու ախոյեան Արթուր Ալեքսանեանը (97 կգ):

Շատ պարտաւորեցնող է, երբ բոլորն ինձմէ միայն յաղթանակներ կ՚ակնկալեն: Այդպէս լարուածութիւնը աւելի շատ կը պատահի, բայց ես ունիմ այն փորձը, որ նման իրավիճակներու մէջ ճիշտ լուծում կը գտնեմ ու լաւ հանդէս կու գամ:

Լոնտոնի Ողիմպիական խաղերու ժամանակ 20 տարեկան էի՝ դեռ երիտասարդ: Նոր էի մտած մեծահասակների կազմ: Փորձի պակաս կար այդ ժամանակ, բայց արդէն հասցուցած էի մեծահասակներուն հետ մրցիլ Եւրոպայի, աշխարհի առաջնութիւններուն: Թերեւս փորձի պակասն էր, որ ինչ-ինչ պատճառներով ինձ մօտ չեղաւ գօտեմարտ մը եւ դարձայ Լոնտոն-2012-ի պրոնզէ մետալակիր:

Ռիոյի Ողիմպիական խաղերուն արդէն աւելի հասուն էի, փորձուած եւ ամէն ինչ ինձ մօտ լաւ եղաւ: Իմ երրորդ Ողիմպիական խաղերուն տրամադրուած եմ լաւ: Աւելի մեծ փորձ ձեռք ձգած եմ մինչ օրս: Յաղթանակի ետեւէն կ՚երթամ, իսկ թէ ինչպէս կը ստացուի, ժամանակը ցոյց կու տայ:

## Թատէ Բոկաչար Դարձեալ Tour De France-ի Ախոյեան



Սլովաքիան ներկայացնող Թատէ Բակաչոր յաջորդական երկրորդ տարին ըլլալով դարձաւ հեծելարշաւի Tour De France-ի ախոյեան:

Անցեալ տարի Բակաչոր դարձած էր հեծելարշաւի նշանաւոր մրցաշարքը ամենէն երիտասարդ յաղթողը՝ 21 տարեկանին:

Անցեալ տարի Բոկաչար անակնկալի մատնած էր մարզաձեւի աշխարհը: Սակայն այս տարի անոր յաղթանակը սպասելի էր: Ան 8-րդ հանգրուանին տիրանալով առաջատարի դեղին շապիկին, կարողացաւ զայն պահել մինչեւ վերջին՝ 216րդ հանգրուանը, որ աւարտեցաւ Փարիզի Շանզելիզէ հրապարակին վրայ:

## Ոսկէ Գաւաթի Մրցաշարքին Ամերիկա Հասաւ Քառորդ Եզրափակիչ



Միացեալ Նահանգներու մէջ ընթացող ՔՈՆՔԱՔԱՖԻ (Հիւսիսային եւ կեդրոնական ամերիկաներու ու Քարիպեան կղզիներու ֆետերասիոն) երկիրներու «Ոսկի Գաւաթ» մրցաշարքի խմբային մրցումները կը մօտենան իրենց աւարտին:

Միացեալ Նահանգներու հաւաքականը հանդէս գալով Բ. խմբակէն ներս՝ երեք խաղերու մէջ մնաց անպարտելի՝ պարտութեան մատնելով Հայիթիին (1:0) Մարթենիքին (6:1) եւ Գանատային (1:0):

Քառորդ եզրափակիչին Ամերիկա պիտի մրցի երրորդ խմբակի մէջ երկրորդ դիրքը գրաւող խումբին դէմ, որ յայտնի պիտի դառնայ Քոսթա Ռիքա-Ճամայքա խաղէն ետք:

Ա. խմբակի առաջին դիրքը գրաւեց Մեքսիքայի հաւաքականը՝ հասնելով Քառորդ եզրափակիչ:

Մրցաշարքին հիւրաբար կը մասնակցի նաեւ Քաթար, ուր յաջորդ տարի տեղի պիտի ունենան Աշխարհի Բաժակի մրցումները:

## Հայաստանեան Ակումբներու Արդիւնքները Եւրոպական Բաժակներու Մրցումներուն

Հայաստանի ախոյեան Ալաշկերտը հասաւ Ախոյեաններու Լիկայի որակաւորման երկրորդ փուլ:

Ուելսի «Կոննա Կի Նոմատսի» հետ պատասխան խաղին երեւանեան խումբը սեփական յարկի տակ յաղթանակ տարաւ 1:0 արդիւնքով:

Լրացուցիչ ժամանակին կոլի հեղինակ դարձաւ 28-ամեայ ֆրանսացի կիսապաշտպան Վենսան Պեզեկուրը:

Հանդիպման ներկայ էր նաեւ Հայաստանի մէջ Մեծ Բրիտանիայի դեսպան Ջոն Պատրիկ Գալագերը:

Յիշեցնենք, որ Ուելսի մէջ տեղի ունեցած առաջին խաղին գրանցուած էր ոչ ոքի՝ 2:2 արդիւնքով:

Ալաշկերտը երկրորդ փուլին կը մրցի Մոլտովայի «Շերիֆի» հետ, որ պայքարէն դուրս թողած է ալպանական «Տեուային»

ՈւԵՖԱ-ի նորաստեղծ Քոնֆերանսերու Կիկայի որակաւորման առաջին փուլի պատասխան խաղին Երեւանի Արարատը Գիւմրիի Քաղաքային ստադիոնի մէջ ընդունեց «Ֆեհերուարին», որ Հունգարիոյ նախորդ առաջնութեան գրաւել է երրորդ տեղը:

Արարատը առաւելութեան հասաւ 2:0 հաշուով:

Մէկ շաբաթ առաջ Հունգարիոյ մէջ տեղի ունեցած խաղին արձանագրուած էր ոչ ոքի՝ 1:1 արդիւնք:

Նոյն մրցաշարքին մասնակցող Երեւանի Նոյան ու Ուրարտուն դուրս մնացին հետագայ պայքարէն:

Հայաստանի փոխախոյեան Նոյան Ֆինլանտիայի մէջ հիւրընկալուեցաւ ԿուՊՍ-էն եւ պարտութիւն կրեց 0:5 արդիւնքով:

Տնային խաղին Նոյան առաւելութեան հասած էր 1:0 հաշուով:

Ուրարտուն Երեւանի մէջ ընդունեց Սլովանական «Մարիբորին» եւ պարտութիւն կրեց նուազագոյն հաշուով:

Առաջին խաղին եւս 1:0 հաշուով յաղթած էր «Մարիբորը»: